



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1672 - 5

13

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄՈՑ
Սոցիալական Դաստիարակութեան Գլխ. Վարչութիւն

№ 18 ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 18

Բ. Ն. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ ՅԵՎ Ս. Ն. ԶՅՈՒԲԻՆՍԿԻՅ

ՌՈՒՍ ԳՅՈՒՂՆ ԱՆՑՅԱԼՈՒՄ

A $\frac{\pi}{2384}$ H8E2 Y

Թարգմ. Հ. ՀՈՎՍԿԻՄՅԱՆ



ՀԱՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ. — ՅԵՐԵՎԱՆ. 1927

№ 632

Գրանդար № 376 (բ)

Տ/Ն 3 000

Պետրասի առաջին տպարանի վարչարարություն

I. ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ.

ՏՊՆ, և նորստ-
 սիրակաց իրա-
 վանքը: Ճորտատիրական իրավունքը, ընդհա-
 նուր և սեղմ գծերով, կալվածատիրոջ
 իրավունքն և գյուղացու և նրա ընտա-
 նիքի աշխատանքի, նրա ստացվածքի, նրա և նրա ընտա-
 նիքի անդամների անձի վրա: Ավելի լրիվ բնութագրելու
 համար ճորտատիրութունը՝ պետք է հիշել նաև այն խը-
 ստութուններն ու տանջանքները, վոր թույլ ելին տալիս
 իրենց կալվածատերերը գյուղացիների նկատմամբ:

Ճորտատիրական իրավունքի ծագման ժամանակը մենք
 չենք կարող մատնանշել այնպիսի ճշտությամբ, ինչպես
 մատնանշում ենք նրա վերացման ժամանակը: Ճորտատի-
 րական իրավունքի վերացումը տեղի ունեցավ որենսդրա-
 կան ճանապարհով, 1861 թ. փետրվարի 19-ի մանիֆես-
 տով, դրա համար ել մենք ճշտությամբ մատնանշում ենք
 այդ պատմական փաստի ժամանակը: Այնինչ ճորտատիրա-
 կան իրավունքը կառավարության առանձին կարգադրու-
 թյամբ, վորոշ որենսդրական վավերագրով և միանգամից
 շտուպացավ: Նա կազմակերպվել է կամաց-կամաց, աստի-
 ճանարար: Գյուղացիների ճորտացման պատմութունը, վոր
 զուգահեռաբար և գյուղացիների, իբրև դասի, պատմությա-
 նը, պետք է անհրաժեշտորեն իր սկիզբն առած լինի ա-
 մենահին ժամանակներից:

Գյուղում ապրողներն սկզբում կոչվում
 էին շինական, ռամիկ. իսկ գյուղացի
 կամ, ինչպես ռուսական հին հիշատակա-
 րաններում է ասված, «քրիստոնյա»* սկսեցին կոչվել հե-

* Ռուսերեն գյուղացի (крестьянин) և քրիստոնյա (христианин) նման
 հնչյուն բառեր են: Մ. Ք.

24891

տագայում 13—14-րդ դարից: Շինականներն ազատ ելին
և ունեցին իրենց սեփական հողերը, այսինքն նրանք միա-
ժամանակ և՛ հողագործ ելին, և՛ հողատեր: Շինականներն
իրրև ազատ և իրավատեր քաղաքացի, ունեցին իրենց
շարժական և անշարժ սեփականությունը, մյուս դասակար-
գերի հետ միասին մասնակցում ելին պատերազմներին,
չեբբեմն նույնիսկ բարձր պաշտոններ ելին ստանում իշ-
խանների մոտ և ընդհանրապես ազատ կերպով տնորինում
իրենց վիճակը:

Դրանով նրանք տարբերվում ելին անազատ բնակչու-
թյունից—ստրուկներից և ծառաներից (ХОЛОП): Ստրուկը
կամ ծառան համարվում եր իր տիրոջ սեփականությունը:
Տերը կարող եր նրան փոխել, ծախել, ծեծել ու ջարդել,
նույնիսկ սպանել՝ առանց վորևե մեկից թույլտվություն
ստանալու և առանց վորևե մեկի առջև պատասխանատու
լինելու: Ստրուկը կամ ծառան, իհարկե, վոչ մի իրավուն-
քով չեցին ոգտվում:

Սակայն շինականները, չնայած ազատ ելին և իրա-
վատեր, այնուամենայնիվ դեռ հին ժամանակ ևս բնակչու-
թյան ստորին դասակարգն ելին կազմում: «Շինականները»
և «ոսամիկները» հակադրվում են վոչ միայն իշխանին, այլ
և նրա թիկնապահ գնդին (դրուժինա), «գլինվորներին» իր-
րև բարձր դասակարգի: Շինականների դիրքն ել, համե-
մատած մյուս դասակարգերին, ստոր եր, ցած: Այսպես՝
«Ռուսսկայա Պրավդան», 12-րդ դարի որենսդրական հի-
շատակարանը, իշխանի սպասավորին, այսինքն իշխանի
մոտ անձին, նրա ոգնականին վիրավորանք հասցնելու հա-
մար տուգանում ե 120 կոպեկ, իսկ շինականին վիրավո-
րելու համար՝ 30 կոպեկ: Վերջապես 13-րդ դարից մենք
տեղեկություն ունենք, վոր «ուժեղ» մարդիկ «շահագոր-
ծում և ծախում են ազատ վորբերին (շինականներին)»: Նույն
տեսակետի վրա չե կանգնած նաև ավելի ուշ ժա-
մանակի որենսդրությունը: Ըստ 1550 թ. Դատաստանագրքի

Իշխանին հասցրած վիրավորանքի, «անպատվության» համար տուգանք եւ առնվում հինգ ուրբի, իսկ գյուղացուն հասցրած վիրավորանքի համար՝ մի ուրբի: Նշանակում եւ թե որեւէսդիւրը շինականներին նայում եւ իբրև ստորին դասակարգի և դրա համար ել այդպես եժան եւ գնահատում նրանց պատիվը, մարդկային արժանիքը: «Ռամիկ» բառը ինքնին շատ վաղ ժամանակից դեռ ստորացուցիչ նշանակութիւնն եւ ստանում, իսկ շինականների այլ անունների թվում հրապարակ եւ գալիս նրանց սոցիալական դրութեանը շատ բնորոշ «վորբ» անունը:

Ինչո՞վ բացատրել այդ չեքուութիւնը, վոր գյուղական ազատ բնակչութիւնը կախման մեջ եւ դնում մյուսներից և իջեցնում հասարակական ցածր աստիճանի վրա:

Գյուղացիների հոգազրկութեանը: Այդ չեքուութի վրա լույս եւ սփռում այսպես կոչված «վարձու մշակների» (ролейный закуп) գոյութիւնը հին Ռուսաստանում:

Վարձու մշակն այն հողագործ գյուղացին եւ, վոր ծառայութեան եւ մտնում կալվածատիրոջ մոտ յեւ նրա գործիքներով մշակում հողը: Կալվածատիրոջ պարտապանը դառնալու դեպքում վարձու մշակը դառնում եւ ծառայատուր: Վարձու մշակը պարտապան դառնալու հետեանքով կանգնած եւ ազատ մարդուն և ստրուկին բաժանող սահմանի վրա՝ մշտապես դատապարտված գլորվելու ըստ ըուկների շրջանը: Այդպիսի մարդուն կարելի չեք և հաշիւ չառնել և իրոք հենց այդ պարտապան գյուղացիների հետ վարվում ելին շատ կոպիտ և խիստ կերպով: 16-րդ դարի հայտնի կրօնական մարտիկ Վասսիան Կոսիչի ասելով վանքերն այդ պարտապան գյուղացիներին «ծեծելով և ջարդելով դուրս ելին քշում իրենց գյուղերից կանանց և չեքեխանների հետ միասին»: Նշանակում եւ գյուղական բնակչութեան կախման յեւ ստորացման բացատրութիւնը պետք եւ վորոնել հողի կարիքի յեւ հողագործութեան մեջ. չե՞ վոր հողն եւ շինականի բարեկեցութեան հիմքը:

Գյուղացու հողագրկության վտանգի աղբյուրը մասնա-
վոր խոշոր հողատիրությունը հանդիսացավ:

**Պայքար հողի
համար:** Տնտեսապես ուժեղը միշտ եւ կուտա-
տնտեսապես թույլին: Գյուղացիները մի-
անգամից և շատ լավ հասկացան այս հանգամանքը: Յերբ
ս. Անտոնի Սիյակին ուղեց բնակություն հաստատել գյուղ-
ացիների մոտ և վանք շինել այնտեղ, տեղական գյուղա-
ցիները խանգարեցին: Նրանք մտածում էին. «հենց վոր
այս ծերունին բնակություն հաստատի մեր կողքին, կարճ
ժամանակում կգրավի մեզ եւ, մեր գյուղերն եւ»: Հասկա-
նալով խոշոր հողատիրության կողմից սպառնացող վտան-
գը՝ գյուղացիներն եւ ավելի ամուր կպան իրենց հողերին: Յեւ
մեր աչքի առջև բացվում է գյուղացիների դրամատիզմով
լի պայքարը հողի, հետևաբար նաև ազատության համար:

Ամենից առաջ գյուղացիներն ամեն կերպ աշխատում
էին խանգարել խոշոր հողատիրության առաջանալը: 15—
16-րդ դարերից և եւ առաջ չեղել են դեպքեր, չերբ գյուղ-
ացիները թույլ չեն տվել վարդապետներին բնակություն
հաստատել և վանքեր շինել իրենց հարևան անմշակ հողե-
րի վրա, և բնակություն հաստատողներին, հակառակ
նրանց աղաչանքներին ու նախազգուշացումներին, դուրս
են քշել ուժով՝ բրերով ու դազանակներով զինված: Բայց
դազանակները չեն կարող պաշտպանել կյանքի գրոհից ու
ճնշումից, և տնտեսական խնդիրներն այնպես հեշտությամբ
չեն լուծվում, ինչպես ցանկանում էին լուծել Անտոնի
Սիյակուն դուրս քշող 15—16-րդ դարի գյուղացիները:
Դուրս քշել մի, չերկու կամ ավելի ծերուկների՝ կարելի չէր,
ինարկե, բայց կանգնեցնել վանական և իշխանական հողա-
տիրության աճումը՝ անկարելի չէր: Յեւ հակառակ առան-
ձին գյուղացիների ջանքերի՝ վանական և իշխանական հողա-
տիրությունն աճում էր, իսկ նրա արշավանքը գյուղացիա-
կան հողատիրության վրա՝ տեղի չէր ունենում իր կարգով:
Վանքերը գրավում էին թե իրենց նվեր տրված հո-
ղերը և թե ձեռք գցում գյուղացիների հողերը: 16—17-րդ

դարերի ընթացքում հողի համար մշտական, անվերջ թյուրիմացություններ յեւ կռիւներ են տեղի ունենում գյուղացիների յեւ վանքերի միջեւ: Սակայն հափշտակելու ճանապարհը չի կարելի ասել, թե միշտ ել ամենայնով ճանապարհն եր և միշտ ել հասնում եր իր նպատակին: Դատարանում վանքերը պետք է ապացուցեցին իրենց իրավունքը հողի վրա, վոր հափշտակութեան դեպքում դժվար եր լինում: Յեւ վանքերը գյուղացիներից հողերը չուրացնելու ուրիշ ճանապարհ գտան — վանքերի առջև այդ միանգամայն որինական ճանապարհ բաց անողը գյուղացիական հողատիրութեան ձևն եր՝ գյուղացիութեան կարիքի հետ միասին:

Գյուղացիներ Գյուղական հասարակութեանները կամ **հողային կազմք:** մի շարք գյուղերի—գավառամասի գյուղացիներ ունեյին միայն մի ընդհանուր սեփականութեան—արոտավայրեր, իսկ վարելահողը մասնավոր սեփականութեան եր: Յուրաքանչյուր գյուղացիական ծուխ ուներ իր հողը և ինքնուրույն անտեսութեան եր վարում: Տնտեսութեան, վարելահող և արոտներ ունեցող ծուխը կոչվում եր «գյուղ» („деревня“): Ծուխը կազմում եր մի ընտանիք—հայրը, զավակները, չեղբայրները և այլն: Ընտանիքի չուրաքանչյուր անդամն այդ «գյուղում» ուներ իր «բաժինը»: Ընտանիքի ամեն մի անդամը կարող եր ըստ իր հայեցողութեան կարգադրել իր «բաժինը» — փոխել, գրավ դնել, ծախել: Յեւ «բաժիններն» այդպիսով ձեռքից-ձեռք ելին անցնում: «Գյուղը» մնում եր անփոփոխ, իսկ «բաժինները» տերերը փոխվում եյին, այդ «բաժիններին» տեր եյին դառնում նույնիսկ ծխին կամ ընտանիքին ոտար մարդիկ: Այդ բաժնետերերը, սեփականակիցները կոչվում եյին «համփսոններ»:

Պաշտերի մուս- Նշանակում է կողմնակի մարդը լիա-
բը գյուղերը: կատար հնարավորութեան ուներ «գյուղում» տեղ բռնելու: Հենց այդ հանգամանքից ել ոգտվե-

ցին վանքերը: Գյուղացին չքավորութեան պատճառով հնա-
րավորութեամբ չունենալով վոչ հարկ տալ «մեծ իշխանին»,
վոչ ել հասարակական ծախքերը վճարել, քայլերն ուղղում
եր դեպի վանք . և այնտեղ գրավ դնում իր «բաժինը»:
Վանքը վարկ տալով գյուղացուն յեւ նրա «բաժինը» գրավ
վերցնելով՝ արդեն իսկ մի վտարով մուտք եր գործում գյու-
ղական հասարակութեան մեջ: Իսկ հողը գրավ դնող գյու-
ղացին, մնալով հանդերձ այդ հողի անվանական սեփակա-
նատերը՝ գրավ դնելու որից դադարում եր նրա կատա-
րյալ տերը լինելուց: Գրավ դնող գյուղացու կապը հողի
հետ թուլանում եր, իսկ վանքի կապն այդ հողի հետ ամ-
րանում, ուժեղանում: Հաճախ գրավին հետևում եր «բաժ-
նի» վաճառումը դարձյալ չքավորութեան պատճառով: Այդ
դեպքում գյուղացու կապը հողից միանգամայն կտրվում
եր, նա դադարում եր այլևս այդ հողի սեփականատերը
լինելուց: Իսկ վանքի կապն այդ հողի հետ, ընդհակառակն,
ամրապնդվում եր, և նա արդեն չերկու վտարով մուտք եր
գործում գյուղական հասարակութեան գիրկը:

Վանքի գնած «բաժինը» հասնում եր վորեվե վանա-
կանի, կրոնավորի, վորը յեւ «գյուղի» մյուս համփսոնների
հետ միասին վարում եր տնտեսութիւնը: Գյուղացին կառ-
չելով ձեռքից դուրս չեկող հողին՝ սովորաբար, իր «բաժի-
նը» վանքին ծախելուց հետո, կապալով վերցնում եր նրա-
նից, ինչ պայմանով ել լիներ, միայն թե մնար իր «բաժ-
նի» վրա: Բայց վանքը միանգամայն սառնասիրտ կերպով
եր նայում գյուղացու իր հողի հետ ունեցած կապին և
քշում եր նրան իր հարազատ ոջախից կամ այնպիսի շա-
հագործման չենթարկում նրան, վոր գյուղացին ինքն եր
հեռանում իր վաճառած «բաժնից»: Այդպիսով «բաժին»
«բաժնի» չետևից վանքերն իրենց ձեռքն ելին գցում գյու-
ղացիների հողերը: Վանքերի դեմ վարած կովում առանձին
գյուղացիներին ոգնութեան եր հասնում գյուղական հասա-
րակութիւնը, վորն աշխատում եր դուրս քշել անկոչ սեփա-

կանակիցներին, համփսոններին: Նա այդ վանականներին
 չէր ընտրում հասարակական աչքի ընկնող պաշտոնների
 համար, չէր հրավիրում հասարակական ժողովի և վանքե-
 րի գրաված հողերի վրա 3-5 անգամ ավելի հարկ եր
 դնում, քան գյուղացիների հողերի վրա: Իբրև պատասխան
 այդ բանի, վանքն ել իր կողմից հրաժարվում եր բոլորո-
 վին հասարակական ծախքերից և պետական տուրքից,
 վոր պարտավոր եր հատուցել իբրև գյուղացիների սեփա-
 կանակից, հասարակության անդամ: Նման դեպքերում
 գյուղացիները բողոք եչին տալիս կառավարությանը վան-
 քի վրա: Գյուղացիական հողերի վանքի ձեռքն ընկնելը
 ձեռնտու չէր կառավարությանը. - հողը ազատվում եր պե-
 տական տուրքից*: Դրա համար ել կառավարությունը
 հաճախ գյուղացիների կողմն եր բռնում և նույնիսկ, վոր-
 պեսզի հողի տուրքից զրկվելուն միանգամայն վերջ տա,
 սկսեց արգելել վանքերին պետական տուրքի չենթակա
 գյուղացիական հողեր ձեռք բերել: Ոսկայն այդ արգելքը
 քիչ ոգուտ տվեց: Դրավի յեվ վաճառքի միջոցով գյուղա-
 ցիական հողերը շարունակում եյին անցնել վանքերին:

Գյուղակաճ ցե-
 ցերը յեվ գյուղ-
 ացիները: Ընդ տ այդպես գյուղացիական հողերին
 եչին կաշոււմ նաև ուրիշ հին ուսական
 կապիտալիստներ - զանազան վաճառա-
 կաններ, առևտրական շարժիներ, իսկ գյուղացիների մի-
 ջից՝ հարուստ ցեցեր: Նրանք մտնում եչին «բաժինների»
 մեջ, համփսոն դառնում և աստիճանաբար ձեռք գցում
 գյուղացիների հողերը: Հետևանքը տալիս եր նույն պատ-
 կերը, ինչ վոր այն դեպքում, յերբ վանքերն եչին չուրա-
 ցնում այդ հողերը: Ուստի ուզի գավառում, որինակ, ա-
 ռևտրականները գնեցին չքավոր գյուղացիներից ամենալավ
 «գյուղերը», ճնշում եչին գյուղացիներին, իրենց ստրուկը
 դարձնում և վերջապես հարկերն իրենց վրայից գցում

* վանքերը սովորաբար ազատվում եյին պետական տուրքերից առան-
 ձին հրովարտակներով:

չքափոր գյուղացիների վզին, վորի պատճառով այդ գյուղացիները շափաղանց աղքատացան և գրավ գրեցին իրենց փոքրիկ «գյուղերը»։ Իսկ շատերը չդիմանալով այդ շահագործություններին՝ «ցրվեցին ջուկ-ջուկ և անհետ կորան» (1676 թ.)։

Հողագուրկների նորացումը: Այսպիսով չողի համար մղած պայքարից գյուղացիները դուրս յեկան վերջին հաշվով վոչ իբրև չաղթող, այլ պարտված:

Հողից գրկված գյուղացուն վոչինչ չէր մնում անել, չեթե վոչ մնալ կալվածատիրոջ - իշխանական կամ վանքական հողում, վորպեսզի սովից չմեռնի: Կալվածատերն ուրախությամբ թույլ էր տալիս գյուղացուն ընակիվել իր հողում յեվ վորոշ հողամաս էր բաժին հանում նրան, բայց վորոշ պայմաններով: Ավելի վաղ ժամանակներում այդ պայմանները բանավոր կերպով եչին կապվում, իսկ հետո սկսեցին գրել իբրև առանձին փաստաթուղթ, վոր կոչվեց «կապալագիր»: Պայմանները լինում եչին սովորաբար այսպես - գյուղացին ստանալով հողամաս՝ պարտավորվում էր բահրա վճարել կալվածատիրոջը, մեծ մասամբ հացահատիկով, չերբեմն էլ դրամով, և կատարել կալվածատիրոջ «գործերը», այսինքն կատարել ամեն տեսակ աշխատանքներ և ծառայություններ կալվածատիրոջ համար - վարել, հնձել, փայտ ջարդել ու կրել, ավազան շինել, թել մանել և այլն: Իր հողամասի վերաբերմամբ ևս գյուղացին վորոշ պարտավորություններ ուներ - վերանորոգել խրճիթը, չեթե կա, իսկ չեթե չկա, նորը շինել, վարել իր արար, մաքրել դաշտը, ցանկապատել, մաքրել մարդագետինը և վոչ մի գեպքում անխնամ չթողնել վարելահողը: Վերջապես գյուղացին պարտավոր էր վճարել իր կարգին պետական տուրքերը:

Գյուղացիների նորացումը: Այսպիսով գյուղացին հաստատվելով կալվածատիրոջ հողի վրա՝ պետք է կարգի բերեր իր հողամասը և կերակրեր թե իրեն, թե կալվածատիրոջը և թե պետական գանձարկը: Իրեն կերակրել կարող էր ինչպես

Պղեր, թեկուզ կիսաքաղց, իսկ կալվածատիրոջն ու պե-
տական գանձարկղը պետք է բավարարեր լրիվ չափով:
Շատ եր խլում գյուղացուց մանավանդ կալվածատերը:
Հերքերչտեյնը, վոր ուսաստանցի շեր, այլ ոտարերկրացի
յեվ Ռուսաստանում յեղել է XV դարի ստաջին քառոր-
դում, ասում է, թե ուս գյուղացին կալվածատիրոջ համար
աշխատում եր շարաթական վեց որ: Սակայն կալվածա-
տիրոջ համար աշխատելը և նրան ծառայություններ մա-
տուցելն ինքնրատինքյան առանձին նշանակություն չե-
ցին ունենալ: Գյուղացին կարող եր հեռանալ և այդպիսով
ազատվել թե մեկից և թե մյուսից: Գյուղացու ծառայու-
թյունները կապված ելին նրա պարտքի հետ:

Պատարի պայ-
մաները: Բանն այն է, վոր գյուղացին կալվա-
ծատիրոջ մոտ եր գալիս հողամաս ստա-
նալու սովորաբար առանց կողակի: Նա վոչ սերմացու ու-
ներ, վոչ հաց մինչև նոր բերքը, վոչ արոր, վոչ ձի—մի
խոսքով՝ շուներ այն կապիտալը, առանց վորի չի կարելի
անտեսությամբ պարապել: Յեվ կալվածատիրոջից «ոժան-
գակություն» եր ստանում անտեսություն սկսելու համար,
այսինքն նրանից «վարկ» եր վերցնում— հող, հաց, գոր-
ծիք և այլն: Այդպիսի վարկը հասնում եր 120 - 300 ուր-
չու: Այդ վարկը գյուղացին, իհարկե, պարտավոր եր վե-
րադարձնել կալվածատիրոջը: Այդ առանց այն ել խոշոր
պարտքն ել ավելի ծանրանում եր հողի կապալի այն
պայմաններում, վորոնց մասին հենց նոր խոսեցինք: Հե-
տևանքն այն եր լինում, վոր գյուղացիները խոշոր պարտ-
քի տակ ելին ընկնում. և դա XVI—XVII դարերում
ընդհանուր չերևույթ եր գյուղացիական կյանքում: Յեթե
Վասսիանի վկայությամբ վանքերը XVI դարում «գյուղա-
ցիների ամբողջ ստացվածքը խլում ելին պարտքի տեղ»,
նշանակում է այդ պարտքերը խոշոր ելին: Յեվ պարտքե-
րի լծի ծանրությունն ու իր վիճակի անելանելի դրու-
թյունը գյուղացին սկսում եր զգալ առանձնապես և տես-

նել պարզ կերպով այն ժամանակ, չերբ պատրաստվու-
 եր հեռանալ կալվածատիրոջ մոտից: Այդ ժամանակ վար-
 կի վերադարձնելու հետ առաջ եր գալիս նաև «պարտա-
 զանցության (նեուստուկա)» և «բնակարանի վարձի» հար-
 ցը: Դրանք չերաշխիքներ ելին, վորոնցով կալվածատերն
 ապահովում եր իրեն, վոր գյուղացին կիրագործի կապալի
 պայմանները: Պայմանագիրը սովորաբար կապվում եր մի-
 քանի տարով. տարիների թիվը վորոշ ասվում եր պայ-
 մանագրում: Գյուղացին պարտավորվում եր վորոշ թվով
 տարիների ընթացքում պահել-մշակել հողը, և չեթե ժա-
 մանակից առաջ թողնում եր հողը և հեռանում, պարտա-
 վոր եր վճարել 70 — 140 ուլբլի «պարտազանցության»
 համար և տարեկան 40 — 50 ուլբլի «բնակարանի վարձ»
 տնից ոգտվելու, տանը բնակվելու համար: Դրա հետ միա-
 սին հրապարակ չեկան նաև նոր պետական հարկեր:

Այդպիսի պայմաններում գյուղացիների
 և առավարու- զրությունը թեթևացնելու համար անհրա-
 քյունք կալվա- ժեշտ եր կառավարության միջամտու-
 ծափրոջ կողմք բռնեց: թյունը գյուղացիների և կալվածատիրոջ
 փոխհարաբերություններին: Յեվ կառավարությունը միջա-
 մտեց. բայց փոխանակ թույլի կողմը բռնելու, նա ուժե-
 դի—կալվածատիրոջ կողմը բռնեց: Նա ավելացրեց «բնա-
 կարանի վարձի» քանակը և այդպիսով ել ավելի ծանրա-
 ցրեց գյուղացու պարտահատուցումը կալվածատիրոջը:
 Իսկ առանց հատուցման գյուղացին անկարող եր տեղից
 շարժվել:

Այսպես աստիճանաբար, դարերի ընթացքում, գյու-
 ղացին մեխավեց հողին — ճորտացավ: Իսկ որենքով այդ հո-
 ղին մեխվելը տեղի ունեցավ միայն 1649 թվին:

Ըստ Գ. ԱԼԵԿՍԵՅԵՎԻ

II. ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ XVII ԴԱՐՈՒՄ.

Հողին մեխվելն Ալեքսեյ Միխայլովիչ թագավորի կա-
քս ուրեմբի: ուսումնասիրությանն առաջին անգամը մերժեց
 պաշտոնյաների (ազնվական) աղերսագիրը և միայն մի
 տարի հետո (1646 թ.) մարդահամարի նոր ցուցակներ
 կազմելու առթիվ ցուցակագրողներին տված հրամանում
 խոստացավ փոխել հետագայում «սահմանված տարիները» * :
 Սակայն չեբբ 1648 թ. գումարվեց Մոսկվայում ազգային
 ժողովը (գեմակիյ սաբոր)՝ քննելու ներկայացուցչական նոր
 որենսդրությունը՝ «բոլոր քաղաքների պաշտոնյաները նո-
 րից աղերսագիր ներկայացրին կառավարությանը, վորով
 խնդրում էին վոչ միայն վերացնել բոլորովին «սահման-
 ված տարիները», այլև արգելել փախստական գյուղացիներ
 ընդունելը և պատժել նրան, ով վոր համարձակվի ընդու-
 նել փախստական գյուղացու, «վորպեսզի մեր Մոսկովյան
 պետության մեջ կռիվ ու մնաս տեղի շունենա դասաստի-
 ճանների (չին) միջև»: Նրանք խնդրում էին նաև պատ-
 ժել այն գյուղացիներին, վորոնք իրենց անունները փոխե-
 լով կամ այլ միջոցներով կաշխատեն հրաժարվել իրենց
 նախկին տերերից:

Կառավարությունն այս անգամ, Մոսկվայում հենց
 նոր տեղի ունեցած այն խռովության թարմ տպավորու-
 թյան տակ, վոր առաջ եր չեկել «ուժեղների» կամայա-
 կանությունների պատճառով, վճռեց ընդառաջ գնալ մանր
 և միջակ պաշտոնյաների ցանկությունը:

Այսպես նախապատրաստվեց «սահմանված տարիներ-
 ը» վերացումն ըստ ներկայացուցչական որենսդրության,

* Փախստական գյուղացիներին վորոնելու, գտնելու և վերջնականապես
 հողին մեխելու համար վորոչ թվով տարիներ եր վորոշած, վորից հետո փա-
 խստականներն ազատ էին համարվում: «Սահմանված տարիներ» կոչվում են
 այդ վորոչ թվով տարիները:

վորի մեջ ասված է. փախստական գյուղացիներին գտնել
և հանձնել «մարդահամարում ցուցակագրված ամեն կարգի
աստիճանավոր մարդկանց՝ առանց ինկատի առնելու սահ-
մանված տարիները»: Հետևաբար, տերը կարող էր այժմ
գտնել և վերադարձնել իր գյուղացիներին՝ չերբ վոր ցան-
կանար: Այդ վորոշումը բոլորովին վերացնում էր ժամա-
նակի սահմանափակման հարցը: Դրա հետ միասին արգել-
վում էր ընդունել և պահել ուրիշի գյուղացիներին: Հակա-
ռակ դեպքում չուրաքանչյուր փախստական գյուղացու
համար ընդունողը տարեկան 10 ուրբլի պիտի տար իս-
կական տիրոջ ոգտին «պետական տուրքերի և կալվածա-
տիրոջ չեկամուտների համար»:

Հողին մեխելն այժմ արդեն տարածվում էր նաև գյու-
ղացու կնոջ, չերեխաների, չեղբայրների, հարազատների և
բոլոր ազգականների վրա, վորոնք առաջ ազատ ելին հա-
մարվում:

Թեև որենսդրությունն արգելում է գյուղացուն ըստ-
քուկ դարձնել և այդպիսով զանազանություն է ուզում
դնել գյուղացու—պետության հարկատուի և ստրուկի մի-
ջև, բայց միևնույն ժամանակ գյուղացիներն ըստ որենքի
զրկվում են անհատական կարևորագույն իրավունքներից
և համարյա անհատական կատարյալ կախման չենթարկվում
տերերից: Որենսդրությունը թույլ է տալիս գյուղացիներին
տեղափոխել մի կալվածատիրոջից մյուսին, արգելելով մի-
այն թագավորի շնորհած կալվածքից փոխադրելը: Որենս-
դրությունը թույլ է տալիս նմանապես գյուղացի աղջիկ-
ներին ու վորբեայրիներին մարդու գնայ ուրիշ կալվածա-
տիրոջ գյուղացիներին, միայն վորոշ վճար տալով նախկին
տիրոջը: Իսկ չեթե գեղջկուհին—աղջիկ թե վորբեայրի—
կփախչի տիրոջ կալվածքից և իբր փախստական կամուս-
նանա վորևե կալվածատիրոջ գյուղացու հետ, այդ դեպ-
քում տերը կարող է վերադարձնել նրան իր մոտ նրա
ամուսնու և չերեխաների հետ միասին: Յեվ չեթե նա

ամուսնացել եւ այլի մարդու հետ, վորը չերեխաներ ունի
առաջին կնոջից, ապա այդ չերեխաներին «չպետք ե հան-
ձնել գանգատավորին, այլ նրանք պետք ե մնան այն կալ-
վածատիրոջ մոտ, վորի ծառայից կամ գյուղացուց վոր
ծնվել են»։ Այսպես որենսդրությունը թույլ ե տալիս քայ-
քայել գյուղական ընտանիքը տերերի սեփականատիրական
իրավունքը բավարարած լինելու համար։ Որենսդրությունն
ընդունում ե նաև այս կամ այն գործարքը տերերի միջև
փոխստական գյուղացիների վերաբերյալ, վորի հիման վրա
հնարավոր եր գյուղացիներին փոխել իրար հետ և այն։
Որենսդրությունը հիշատակում ե տերունի գյուղացիների
միջանի անհատական և ստացվածքային իրավունքներ,
բաց շատ անորոշ և մթին կերպով, ինչպես վոր ընդհան-
րապես անորոշ և մթին կերպով ե սահմանում նաև գյուղա-
ցու և տիրոջ փոխհարաբերությունները։ Գյուղացու անձն
ու իրավունքները համարյա վոչնչով ապահովված չեն
տիրոջ կամայականությունից։ Այսպես՝ որենսդրությունը
պատիժ չի վորոշում տիրոջը նրա խստասիրտ վերաբեր-
մունքի համար, չեթե նույնիսկ այդ վերաբերմունքը մահ
պատճառի գյուղացուն։ Միևնույն ժամանակ որենսդրու-
թյունը վորոշում ե «հավատ չընծայել գյուղացիների վոչ
մի ամբաստանության (գանոս) իրենց տերերի վերաբեր-
մամբ՝ բացի պետական դավաճանության վերաբերյալ դեպ-
քերից»։ Դրա հետ միասին կալվածատերերն իրավունք են
ստանում դատելու իրենց գյուղացիներին՝ բացառութեամբ
քրեական կարևոր հանցանքների։ Վերջապես գյուղացու
ստացվածքային հարաբերությունները դեպի իր տերը,
նրա հողամասի չափը, պարտավորությունների և հատու-
ցումների չափը մնում են միանգամայն անորոշ։ Կալվածա-
տիրոջ վրա վորևե կալվածք հաստատելու դեպքում սված
այսպես կոչված «հաստատման» թղթի մեջ հրահանգվում
եր այդ կալվածքում ապրող գյուղացիներին վարել կալվա-
ծատիրոջ արտը և վճարել նրան հողային տուրքը, բահրան։

Որենսդրութիւննից հետո գյուղացիները թեև ստաց-
 վածքի տեր ելին համարվում, առուծախի գործարքներ
 կատարում, բայց այդ բոլորը միմիայն տիրոջ թուլտու-
 թյամբ: Որենքը գյուղացու ստացվածքն ընդունում է վոր-
 պես հողատիրոջ սեփականութիւնն: Այսպես՝ գյուղացիների
 վրա պարտավորութիւնն է դրվում իրենց տիրոջ պարտ-
 քերի համար: Յեթե տերը պարտքի տակ է ընկնում և
 վոչինչ չունի վճարելու, ապա կարգադրվում է, վոր նրա
 պարտքը հոգան նրա կալվածքի գյուղացիները, վորոնցից
 բոնի կերպով առնվում է այդ պարտքը: Գյուղացիների
 վրա չեն ընկնում նաև այն տուգանքները, վոր դրվում են
 նրանց տերերի վրա՝ պաշտոնից կամ ծառայութիւննից բա-
 ցակալելու պատճառով: Յեթե սրան ավելացնենք, վոր
 տերերը պատասխանատու ելին իրենց գյուղացիների վճա-
 րելիք պետական տուրքերի համար, ապա պարզ կլինի,
 թե վորքան լայն իշխանութիւնն էր տալիս որենքը կալվա-
 ծատերերին իրենց գյուղացիների անձի նկատմամբ:

Իրականութիւնը, սակայն, շատ ավելի
 Գյուղացիների
 վճարումն հեռուն էր գնում: Հիշյալ դարի յերկրորդ
 սկիզբը: կեսում հետզհետե ավելի և ավելի չե-
 ստվորութիւնն դառնում ամեն տեսակի գործարքներ
 կատարել գյուղացիների վերաբերմամբ: Տերերը փոխում
 են գյուղացիներին մեկը մյուսի հետ, գրավ են դնում,
 ընծայում, ծախում: Իրենց կալվածքներում նրանք առանց
 վերահսկութեան կարգադրում են գյուղացու աշխատանքը,
 իրենց հայեցողութեամբ նրանց վրա տուրք դնում, իսկ
 անհնազանդութեան դեպքում պատիժների չենթարկում,
 մինչև իսկ մտրակով անխնա կերպով հարվածում: Վոր-
 պեսզի ավելի լավ պատկերացնենք XVII դարի գյուղա-
 ցիների վիճակը, դիտենք այդ ժամանակաշրջանի կյանքը՝
 միջանի որինակներ բերելով կենդանի իրականութիւննից:

Ահա թե ինչպես ելին ապրում իշխան
 Միջնադարյան Բարիս Իվանովիչ Մարոզովի գյուղացի-
 կալվածք մի ները: Լինելով Ալեքսեյ Միխայլովիչի
 պետութիւնն է, դաստիարակն ու սիրելին՝ Մարոզովն ամբողջ պետութեան

68

կառավարիչ դարձավ, թեկուզ կարճ ժամանակով, հենց
 վոր Ալեքսեյ Միխայլովիչը գահ բարձրացավ: Մարդովը
 շնորհիվ իր բարձր դիրքի ամենահարուստ կալվածատերը
 դարձավ, ընդարձակ և բազմաթիվ գյուղերի և ավանների
 սեփականատեր Մոսկվայի, Րյազանի, Նիժեգորոդի և այլ
 նահանգներում: Այսպես Ալեքսեյ Միխայլովիչ թագավորն
 իր թագավորութան սկզբում, չերբ թե ինքը և թե Մա-
 րդովը հենց նոր ելին ամուսնացել Միլոսլավսկի քույրերի
 հետ, իր սիրելուն՝ Մարդովին նվիրեց հարուստ, այժմս
 ել հայտնի, Լիսկովո և Մուրաշկինո մերձփոլյայան գյուղերը,
 վորոնցից առաջինն ուներ 5400 դեսիատին հող, իսկ չեր-
 կորդը՝ 11,700 դեսիատին, բազմաթիվ այլ և այլ խոտ-
 հարքներով, անտառներով, ձկնառատ ջրերով և այլ պի-
 տանի վայրերով: Կյանքի վերջին շրջանում (մեռավ 1662 թ.)
 Մարդովի կալվածքների ծխերի թիվը հասնում էր 8000 ի
 20.000 գյուղացիներով իսկ հողը՝ 80,000 դեսիատին:

1687

1682

1682

Այդպիսի խոշոր կալվածքներ կարելի չե կառավարել
 միայն ամբողջ շարք մարդկանց ու հիմնարկների ոգնու-
 թյամբ, վորոնց կազմակերպությունը հիշեցնում էր կար-
 ծես Մոսկովյան պետությունը փոքրիկ ծավալով: Կառա-
 վարութան կենտրոնը կազմում էր ինքը «թագավորը» —
 Բարիս Իվանովիչը և իշխանական տնորեն պալատը Մոս-
 կվայում, ուր նստում ելին իշխանի չերկու հավատարմա-
 տարները նրա ծառաներից՝ պաշտոնյանների և գրագիրների
 մի ամբողջ շտատով: Կալվածքները կառավարելու համար
 ուղարկվում ելին հատուկ գործակալներ, նույնպես իշխա-
 նի մարդկանցից: Ինչպես քաղաքապետներին Մոսկվայից
 զանազան քաղաքներ ուղարկելիս, այնպես էլ այդ գործա-
 կալներին հրահանգներ (նակազ) էր տրվում, վորոնցով
 վորոշվում ելին նրանց պարտականությունները, հարաբե-
 րություններն ու իրավունքները կալվածքում ապրող գյու-
 ղացիների նկատմամբ: Մեզ հասել է այդպիսի հրահանգ-
 ներից մեկը, վոր վերաբերում է 1649, այսինքն հենց
 Ներկայացուցչական Որենսդրութան հրատարակման թվին:



Գործակալներ: Ըստ հրահանգի գործակալը պետք է կառավարեր գյուղացիներին և հողագուրկ մշակներին, դատ ու դատաստան աներ «առանց ձգձգում ների, անկաշառ և անշահասեր կերպով»: Ճիշտ է, գործակալին հրահանգվում էր դատ վարել գյուղապետների (տանուտեր) և ընտրյալների հետ, բայց գործնականում մեծ մասամբ նա ամեն ինչ կատարում էր ինքը մենակ, իր իշխանութչամբ: Գյուղական հասարակութչունից ընտրվածները մեծ մասամբ ծառայական դեր էին կատարում գյուղացիներին կող ու բեգառ (տերունի տանը և դղջակում աշխատելու) նշանակելիս, բահրան հավաքելիս ու իշխանին տանելիս և այլն:

Իսկ գյուղացիներից ընտրվում, ավելի հաճախ նշանակվում էին հատուկ գործակալներ, «գզիրներ» գյուղացիների վրա վոստիկանական հսկողութչուն ունենալու, կարգ ու կանոնի հետևելու գյուղացիների մեջ, ինչպես գյուղական կյանքում, այնպես էլ տերունի աշխատանքի ժամանակ: Գզիրները խիստ կերպով հետևում էին, վոր գյուղացիները գողացված կամ հափշտակած ձիեր ու իրեր չգնեն գողերից, գողութչուն չանեն ու գողերի հետ կապ չունենան: Յեթե գյուղում չերևան էին գալիս նման «գողեր», գզիրը պարտավոր էր տանուտերի և սարքյարների հետ միասին «խելքի բերել» նրանց բոլոր գյուղացիների ներկայութչամբ: «Առաջին հանցանքի համար, մանավանդ չեթե թեթև հանցանք է, հանդիմանել հանցագործին և արձակել չերաշխավորութչամբ. չերկրորդ անգամ գողութչան մեջ բռնելու դեպքում՝ ճիպոտի հարվածներ տալ. չերրորդ անգամ՝ մտրակի հարվածներ. վերջին չերկու դեպքում էլ հանցավորին արձակել խիստ չերաշխավորութչամբ: Իսկ չեթե չերաշխավոր չլինի (այսինքն չեթե հարևան գյուղացիները չհամաձայնեն պատասխանատվութչուն հանձն առնել հանցավորի համար), այդպիսի գողերին բանտարկել, մինչև վոր հաստատուն չերաշխավորներ գտնվեն,

« Եւ այդ մասին գրավոր տեղեկութիւն տալ իշխանին Մատկվա »:

Հրամայված եր աչքի ընկնող ըմբոստ գյուղացիներին « գնդանում » նստեցնել (վտաները գնդանի, կոճղի մեջ գնել) կամ « շղթայել »: Միայն ծանր և քրեչական հանցանքների դեպքում և կողմնակի մարդկանց հետ ընդհարվելիս հանցավորներն ուղարկվում էին քաղաք քաղաքալին գատավորի կամ գավառի կենտրոնի քրեչական գատավորի մոտ գատվելու:

Նախված առաջին հատուկ հարցում: Այսպիսով տեսնում ենք, վոր տերունի գյուղացիների դատը կալվածատիրական մեծ տնտեսութիւններում մինչև անգամ վոչ թե ինքը կալվածատերն եր վարում, այլ վերջիվերջո հանձնվում եր գործակալին, իշխանի ծառային, վորին հենց հաճախ ճիշտաի հարվածների չեր չենթարկում իշխանը՝ տիրոջ շահերը չեռանդուն կերպով չպաշտպանելու համար: Գործակալը, վորպես գատավոր և կառավարիչ, իրավունք ուներ գյուղացուն բանտարկելու, գնդան դնելու, շղթայելու, ճիշտաի և մտրակի հարվածներ տալու: Գործակալին տված հրահանգը — գյուղացիների դատը առանց ձգձգումների և անշահասիրութչամբ վարել՝ իրոք միայն գեղեցիկ խոսքեր ելլին, վորոնք չերբեք ել չեյին իրագործվում, ինչպես այսօր են տալիս գյուղացիների հաճախակի բողոքները գործակալների ճնշումների մասին: Ասենք, հենց ինքն իշխանն ել աչքի չեր ընկնում առանձին փափկասրտութչամբ, ինչպես չերևում ե դատական միջանի դեպքերից, վորոնց անձամբ մասնակցութիւն ե ունեցել նա: Նրա կարգադրութիւնների մեջ հաճախ հանդիպում ենք ճիշտաի, մտրակների հարվածներ տալու, բանտարկելու և այլ նման հրամանների:

Բացի գրանից, համաձայն Մարտգովի հրամանի, գյուղացիներն առանց « ներկայանալու » (առանց հարցնելու, առանց թույլտվութչան) վոչ մի տեղ չպետք ե հեռանա-

փն տերունի կալվածքից: Յեթե մեկը կարիք եր գգում
 վորևե տեղ գնալու, պետք է ներկայանար գործակալին:
 Վերջինս տալիս եր նրան հատուկ «անցաթղթ», վորի
 մեջ գրվում եր, թե այս-ինչ գործակալը թույլ տվեց գյու-
 ղացուն գնալ այս-ինչ տեղը. դրա հետ միասին գրվում եր
 նույնպես, թե ինչ գործով է գնում գյուղացին: Յեթե
 գյուղացին Մոսկվա չեր գնում, այդ դեպքում կարգադրը-
 վում եր, վոր գյուղացին իր «անցաթղթով» ներկայանա-
 այնտեղ իշխանական դարպաս— ապարանք Մոսկվայի գոր-
 ծակալին կամ իշխանական սպասավորին— պալատական
 պաշտոնյային: Առանց այդպիսի «անցաթղթի», վոր այժը-
 մյան անցաթղթի նշանակությունն ուներ, գյուղացին իրա-
 վունք չուներ տերունի կալվածքից վորեվե տեղ գնալու:

Գյուղացիների Գործակալին իշխանն, իմիջի այլոց,
Տեղափոխու- պատվիրում եր հարևանների հետ կովե-
թյունը: լուց խուսափելու համար մանր կալվա-
 ծատերերից, ազնվականներից և իշխանագուններից գյու-
 ղացիներ չընդունել տերունի կալվածքում, թեկուզ նրանք
 իրենց ազատ հայտարարեն: Սակայն այս պատվերն ել մեծ
 մասամբ ձևի համար եր տրվում, վոր և գործակալը շատ
 լավ եր հասկանում: Նույն հրամանի մեջ գործակալին
 կարգադրվում եր «չենացնել» կալվածքը, հավաքել հին
 գյուղացիներին և բնակեցնել դատարկ տներում, վորպես-
 զի դատարկ և հասութաբեր տեղերը պարապ չմնան: Դրա-
 նից եր կախված կալվածքի արդյունավետութունը, դրա-
 նից եր կախված նաև իշխանի բարչացակամութունը դե-
 պի գործակալը: Դրա համար ել գործակալն ամբողջ ուժով
 աշխատում եր լցնել գյուղացիական դատարկ տները և
 ընդունում եր դրսից չեկող գյուղացիներին, կատարելով,
 իհարկե, անհրաժեշտ ձևականութունները: Տեղափոխվող
 գյուղացիները, վորպեսզի ազատ լինեն հետապնդումից,
 դիմում ելին այն հնարներին, վոր արգելված եր հենց
 Որենսգրքով.— փոխում ելին անունները, կեղծում նախկին

Քնակավայրերը և այլն: Վոր դրսից չեկած փախստական
գյուղացիների թիվը քիչ չեր Մարոզովի կալվածքում, պարզ
չերևում է այն բազմաթիվ խնդրագրերից, վորով մանր
կալվածատերերը դիմում եյին Մարոզովին և խնդրում
վերադարձնել իրենց գյուղացիներին, վորոնք ընդունվել
են իշխանի կալվածքում իբրև դրսից չեկած ազատ մարդիկ:
Այս և շատ ուրիշ նման դեպքերից չերևում է, վոր Որենս-
գրքից հետո ևս գործադրվում էր գյուղացիների փոխա-
դրությունը, և նույնիսկ կառավարությունն ինքը միջանի
դեպքերում վերականգնում էր նախկին կարգը, վոր գո-
յություն ուներ մինչև «սահմանված տարիների» վերացու-
մը: Փախստական գյուղացիների պատճառով տուժած տե-
րերի հայցը մերժում էր կառավարությունը՝ պատճառա-
բանելով, թե հայցի ժամանակն անց են կացրել: Ամենից
շատ այդպիսի պատասխան կառավարությունը տալիս էր
այն դեպքերում, չերբ գյուղացիները փոխադրվում եյին
«ուժեղների» մոտ:

Տնտեսավարության վերաբերմամբ գործակալը պետք
է հետևեր, վոր գյուղացիներն «իրենց տները կառուցելին
խնամքով, տերունի գործարանները բանեցնելին, անտու-
ռում վարելահող մաքրելին և վարելին խնամքով»: Գյու-
ղացիները խնամքով պետք է վարելին նաև տերունի ար-
տերը՝ վորքան դեսիատին վոր մատնանշած էր չելեք
դաշտերից* չուրաքանչյուրում:

Գյուղական հա- Գործակալի այդպիսի արթուն հսկողու-
սարակուլթյուն: թյան տակ գյուղական հասարակությու-
նը սլահպանել էր, այնուամենայնիվ, վորոշ ինքնուրույ-
նություն համայնական տնտեսական գործերում:

Գյուղական կամ շինական համայնքը տանուտերների
և ընտրովի գյուղացիների միջոցով, բայց նույն գործակա-
լի հսկողության ներքո, բաշխում էր գյուղացիական ծխե-

* Յերեք դաշտ ասելով պետք է հասկանալ՝ վարելահողը, խոտհարքը և
արոտատեղը: Ծ. Թ.

րին վարելու և խոտհարքի հողաբաժիններ, բաժանում են կալվածատիրոջ և պետական գանձարանի ոգտին զանազան պարհակություններն ու տուրքերը՝ ղեկավարվելով այն բանով, Վոր ամեն մի գյուղացի հողաբաժին ստանա և ամեն մի գյուղացի վճարի «ըստ ունեցածի» կամ բան կարողության:

Հողաբաժինների մասնատրումը և հողատուրքի բաշխումը կատարվում էր սովորաբար ըստ վիտերի: Վիտը հողային միավոր է՝ 6—8 դեսիատին չերեք դաշտերից չուրաքանչյուրում. հետևաբար 18—24 դեսիատին բոլոր չերեք դաշտերում: Վիտը բաժանվում էր ավելի մանր մասերի: Միջին գյուղացիական հողաբաժինը Մարոգովի կալվածքում հավասար էր $\frac{1}{8}$ վիտի («ոսմակա» կամ «ոսմոխա»): Կային, իհարկե, ավելի մեծ և փոքր հողամասեր: Հազվադեպ հարուստ ծխերը միայն ունեցին ամբողջ վիտեր:

Գյուղացիական պարհակություններն ու վճարումները շատ այլազան ու անհամաչափ էին վոչ միայն տարբեր կալվածատերերի կալվածքներում, այլև միևնույն կալվածատիրոջ զանազան գյուղերում ու շեներում: Գյուղացիները տիրոջ ոգտին՝ 1) կոո կամ բեգառ էին տանում, 2) բահրա վճարում, Վոր XVII դարում տեղի չե ունենում մեծ մասամբ դրամով, 3) զանազան այսպես կոչված «ուտեստի պաշար» և պատահական տուրքեր տալիս:

Կոո ու բեգառը բաղկացած է հետևյալ պարհակություններից— 1) աշխատանք տերունի դարպասում (իշխանական տան և շտեմարանի վերանորոգում, բնակարանի շինություն, այգիների ցանկապատելը և այլ մանր գործեր), 2) դաշտային աշխատանքներ և վերջապես 3) գյուղացիների սայլերով տերունի մթերքների տեղափոխություն իշխանի դարպասը, չերբեմն ել մայրաքաղաք:

* Վիտը գուտ ուսական է: Հայաստանում գործ էին անում խալվար՝ Վոր դարձյալ ունեք իր ստորաբաժանումները— չարեք, վիտը, սոմար, կատ և այլն: Գործ է անվում մեղնում նաև որավար: Մ. Թ.

Գլխավոր, շատ կամ քիչ կանոնավոր պարհակությունը դաշտային աշխատանքն էր. գյուղացիները վարում էին կալվածատիրոջ վարելահողը, հնձում, կալսում, կրում, խոտը հարում և հավաքում: Տերունի վարելահողի ընդարձակման հետ զուգընթաց XVII դարում ավելանում էին նաև գյուղացիների աշխատանքները կալվածատիրոջ համար: Սովորաբար նրանք կալվածատիրոջ համար վարում էին գյուղացիական վիտից 1 — 2 և ել ավելի դեսիատին վարելահող: Սակայն ընդհանրապես վարելահողի չափը միատեսակ չէր. շատ հող վարող գյուղացիները քիչ բահրա էին տալիս և ընդհակառակը: Բացի դրանից իշխանական «գյուղին» ավելի մոտ ապրող գյուղացիներն ավելի շատ և ավելի հաճախ էին կոռ ու բեգառ տանում, իսկ հեռու ապրող գյուղացիական ծխերը դրա փոխարեն ավելի մեծ բահրա էին վճարում: Գյուղացիներն ընդհանրապես բահրային սխտեմը գերադասում էին կոռ ու բեգառին, քանի վոր վերջինս կալվածատիրոջ կողմից ավելի շատ կամայականությունների չէր չենթակա, քան բահրան: Բահրային վճարման դեպքում համայնքն ավելի ինքնուրույնութուն կարող էր վերապահել իրեն:

Դրամակաճ Սակայն, ինչպես տեսնում ենք Մարո-
բահրա: դովի գյուղացիների որինակից, իշխանը չէր քաշվում չափից դուրս մեծացնել դրամական բահրան: Այսպես՝ Լիսկով ավանի գյուղացիները, քանի դեռ պետական էին, 7 ու. 50 կոպեկ էին վճարում չուրաքանչյուր վիտի համար, իսկ չերբ (1646 թ.) այդ ավանը շնորհվեց Մարոդովին, վերջինս ավելի քան չերկու անգամ բարձրացրեց գյուղացիական բահրայի չափը՝ նշանակելով 20 ու. չուրաքանչյուր վիտից ավանում ապրողներին և 15 ու. շեներում ու գյուղերում ապրողներին*: Ճիշտ է, նոր բահրան մտցնելուց հետո լիսկովցիներն ազատվում էին ամեն տեսակ կոռ-բեգառից և «ուտեստի պաշար»

* XVII դարու մի ուրբին հավասար է ներկայիս 16 ուրբուն:

վճարելուց: Սակայն այդ պայմանը շուտով խախտվեց— գյուղացիներին ստիպում ելին առաջվա նման տերուհի աշխատանքներ կատարել և վոչխարներ, հավեր, ձու, պանիր, չուղ և այլ մանր հասուցթներ տալ կալվածատիրոջ ոգտին: Այդ առթիվ Լիսկովոյի գյուղացիներն աղերսագիր ուղարկեցին իշխանին, վորի վերջում գրում ելին. «Պետական բահրայի վրա ավելացրած քո տուրքերից մենք, քո վորքերդ, աղքատացանք և մեծ պարտքերի տակ ընկանք. այժմ հնար չունենք վճարելու քո բահրան. մեզնից շատերն այժմ թափառում են դես ու դեն: Վողորմած չեղիր, տեր Բարիս Իվանովիչ: Հաճիր թույլ տալ մեզ, քո խեղճ վորքերին, վոր այսուհետև չվճարենք քո տուրքերը: Վողորմած չեղիր, տեր, խղճա՛ւ: Հայտնի չե, թե ինչ պատասխանեց Մարոգովը լիսկովցիների այդ աղերսագրին. բայց ահա թե ինչ ե գրում նա 1651 թվին Մուրաշկինոյի գործակալին. «Դու արդեն գրել ես ինձ, վոր իմ պատվերը— հավաքել գյուղացիներից անցյալ տարիներից մնացած փողերը— չի կատարվում. գյուղացիները չեն վճարում: Անձամբ հավաքիր լրիվ կերպով այդ փողերը գյուղացիներից: Իսկ ովքեր աղքատ են և վոչինչ չունեն տալու, նրանց ել հրամայիր աշխատել պոտաշի գործարաններում և հաշվիր բահրայի տեղ. կամ հրամայիր մոխիր շինել և կրել ուր վոր հարկավոր ե և ելի հաշվիր բահրայի փոխարեն»:

Գյուղացիների Փախուստը սովորական և ամենատարածված ձևն եր, վորով գյուղացիները պատասխանում ելին ճորտատիրական իրավունքի ծանրությանը: Գյուղացիական տեղափոխությունների լիակատար արգելքը, չերբ տնտեսական և բարոյական ճնշումը տերուհի գյուղացիների վերաբերմամբ ավելի ևս ծանրացավ, վոչ միայն վերջ շտվեց փախուստներին, այլ գուցե և ավելի ուժեղացրեց. այդ չերևում ե ծառայողների մըշտական բողոքներից փախուստների մասին և պետական այն մի շարք միջոցներից, վոր ձեռք ելին առնվում գյուղ-

դացիական փախուստների դեմ Ներկայացուցչական Որենս-
գրութչունից հետո:

1658 թ. հրամանով կառավարութչունը վորոշեց հե-
տախուսներ ուղարկել բոլոր քաղաքները՝ գտնելու փա-
խրստականներին: Հրամայված էր բռնված փախստական-
ներին վերադարձնել նախկին տերերին՝ կանանցով, չերե-
խաներով և ունեցած-չունեցածով հանդերձ: Նույն հրա-
մանով առաջին անգամս որենքով պատիժ էր դրվում
փախստական գյուղացիների վրա նրանց «գողութչան»
համար—«վոր նրանք վնասել են իրենց կալվածատերերին
փախչելով նրանցից»: Հրամանը հրահանգում էր դրա հա-
մար անխնա կերպով մտրակի հարվածներ տալ նրանց,
իսկ «ավելի վատ գողերին», վորոնք փախուստի ժամա-
նակ սպանում էին իրենց տերերին, նրանց կանանց ու
չերեխաներին, կամ հրդեհում նրանց տները՝ մահվան պա-
տիժ տալ: Փախստականներին ընդունող և թազցնողներն
ըստ Որենսգրքի պետք է 10 ուլբլի տուգանք տային:
Բայց շուտով թազցնողների վերաբերմամբ ևս ուժեղացան
պահանջի միջոցները:

1661 թ. նոր հրամանը պատվիրում էր մտրակի հար-
վածներ տալ այն գործակալներին, վորոնք ընդունում էին
փախստական գյուղացիներին իրենց ցանկութչամբ, առանց
իրենց տերերի հրամանի, «վորպեսզի այսուհետև մյուսնե-
րի համար այլևս գրավիչ չլինի ուրիշների փախստական
մարդկանց և գյուղացիներին ընդունելը», այսինքն խրատ
լինի մյուսների համար: Իսկ չեթե փախստական գյուղա-
ցուն ընդունող գործակալներն արել էին այդ իրենց տե-
րերի կամքով, այդ դեպքում վերջինները վոչ միայն պար-
տավոր էին իրենց հաշվով չեստ ուղարկել փախստական-
ներին նրանց նախկին տերերի մոտ և վճարել իրենց մոտ
աշխատած տարիների համար ըստ Որենսգրքութչան, այլև
ամեն մի փախստական գյուղացու համար պարտավոր էին
մի ուրիշ «վերադիր» գյուղացի ևս տալ կնոջ, չերեխանե-
րի հետ և ունեցած-չունեցածով:

Հետևյալ հրամաններով (1664 թ., 1692 թ., 1698 թ.)
տուգանքներն ուժեղացան. ամեն մի փախստականի հա-
մար պատվիրվում էր տալ չորս «վերադիր» գյուղացի և
20-ական ռուբլի տուգանք իր մոտ աշխատած տարիներին
համար:

Ըստ Ի. ԿԱՏԱՅԵՎԻ

III. ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ.

Ք ա ց ա ր ձ ա կ
մ Ի ա պ Ե Տ Ո Ւ Բ Յ Ո Ւ Ն
յ ե վ ա զ Ց վ ա կ -
Ն Ո Ւ Բ Յ Ո Ւ Ն Բ Զ:

XVIII դարի կեսից սկսվում է ազնվա-
կանություն պարտադիր ծառայությունից
ազատվելու պրոցեսը և նրա սոցիալական
արտոնությունների աճումը: Այդ հանգա-
մանքը մեծ կապ ունի ազնվականության ունեցած մաս-
նակցության հետ պալատական հեղաշրջումներին:

Պետրոսից հետո միջանի անգամ կռիվ տեղի ունեցավ
զահի համար զահական թեկնածուների միջև, և ազնվա-
կան գվարդիան (թիկնապահ զորք) սկսեց ղեկավարող
նշանակություն ձեռք բերել պալատական հեղաշրջումների
մեջ. իսկ Աննա Իվանովնայի զահ բարձրանալուց հետո
ազնվականությունը նույնիսկ փորձեց հոգուտ իր սահ-
մանափակել ինքնակալությունը: Բարձրագույն իշխանու-
թյունն այդ պատճառով զգում էր իր կախումն ազնվա-
կանության բարյացակամ վերաբերմունքից և, փորպեսզի
պաշտպանած լինի ինքնակալության անսահման զրույթները,
ստիպված էր ուժեղ կերպով պաշտպանել ազնվականու-
թյան արտոնությունների աճումը: Շնորհիվ այդ հանգա-
մանքի Պետրոսից հետո ազնվականությունը դարձավ հա-
սարակության տիրապետող դասակարգը, իսկ բարձրագույն
իշխանությունը՝ ազնվականության կամակատար գործիքը:
Իզուր չէր, փոր Յեկատերինա II պուգաշովչիկինայի ժա-
մանակ Կազանի կալվածատիրուհի հայտարարեց իրեն,

վորպեսզի ընդդժի իշխանության և ազնվականության հաս-
մերաշխությունը:

**Երավուցեցեց
ու պատակա-
նուքսուցեց:** Սկսած այդ ժամանակից ազնվականն
սկսեց հաստատ տեղ գրավել գավառում:
Նա, իբրև հարկ հավաքող և գյուղացիա-
կան տնտեսության խնամակալ, լայն իրավունքներ ուներ
գյուղացիներին վերաբերմամբ: Այդ իրավունքները հենց
նախորոք հող ելին պատրաստել արդեն նրա համար կեն-
տրոնից շրջան տեղափոխվելու: Իրա հետ միասին ազնվա-
կանությունը կամաց-կամաց ճորտային աշխատանքի իրա-
վունքն էլ ե գարձնում իր մենաշնորհը: Մի շարք հրա-
մաններով ազնվական ծագումն չունեցող բոլոր անձնա-
վորությունները, թեթև բացառությամբ, զրկվում են ճոր-
տատիրական իրավունքից. իսկ 1754 թվի հողաշափական
հրահանգի համաձայն ճորտատիրական իրավունքից զրկվում
են նույնիսկ այն ազնվականները, վորոնք ազնվականու-
թյուն են ստացել վոչ թե շնորհիվ իրենց ծագման, այլ
շնորհիվ իրենց անձնական ծառայությունների ըստ բարձ-
աստիճանացույցի: Ճորտատիրական իրավունք չունեցող
բոլոր անձանց հրամայվում էր մատնանշած ժամանակա-
միջոցում ծախել իրենց ճորտերը: Վերջապես ազնվական-
ները 1760 թվին ստացան մի ուրիշ կարևոր իրավունք
ևս - Սիբիր աքսորել իրենց ըմբոստ գյուղացիներին:

Այսպիսով XVIII դարում հետզհետե ավելի և ավելի
չեր լայնանում ազնվականների իրավունքը և նեղանում
նրանց պարտականությունների շրջանը հանդեպ պետու-
թյան: Այժմ արդեն ազնվականությունն անդադար պնդում
է իր ցանկությունն՝ ազատվելու վերջնականապես պար-
տադիր ծառայությունից, և 1762 թվին Պետրոս III-ի հրա-
մանով իրոք ձեռք է բերում այդ ազատությունը: Այդ
հրամանի հրատարակությամբ ճորտատիրական իրավունքը
կորցնում է իր պետական նշանակությունը, պատմական
անհրաժեշտության իր բնույթը. նա այժմ դառնում է ի-

բաժնուհատիչ անոնց պարտականություններին: Ճորտերը ծառայում են ազնվականներին, իսկ վերջիններս ազատվում պետական պարտադիր ծառայությունից:

Ճորտերի քվի XVIII դարու 60-ական թվականներին աճումը յեվ գրա կատարած 3-րդ վերաքննության համապատասխանությամբ: ձայն վելիկառուսիայի և Սիբիրի ավելի քան յոթ միլիոն ազգաբնակչութունից արական սեռի 3.786.771 հոգին, այսինքն գյուղացիության ընդհանուր թվի 53⁰/₀-ը ճորտեր ելին:

Չանազան միջոցներով եր ավելանում ճորտերի քանակը: Մենք արդեն հիշեցինք ազատ մարդկանց ցուցակագրությունն ըստ վերաքննությունների. բայց դրանից ել շատ ավելի մեծացավ ճորտերի քանակը այս կամ այն ծառայության համար բնակավայրեր շնորհելու միջոցով: Այդպիսով Պետրոսի թագավորության ժամանակ մոտ 170 հազար գյուղացի շնորհվեց ազնվականներին: Նրա հաջորդները, մասնավորապես կին հաջորդները, վորոնց շուրջը հոմանիսների (Ֆավորիտ) ամբողջ խմբեր ելին պատվում, ավելի արագացրին այդ շնորհը կամ նվիրատվությունը: Պետրոսից մինչև Յեկատերինա II, 35 տարվա ընթացքում, 500.000 հոգի գյուղացի շնորհվեց ազնվականներին: Յեկատերինան իր կառավարությունն սկսեց նրանով, վոր 18.000 գյուղացի ընծայեց իբրև վարձատրություն իր այն «գործակիցներին», վորոնք աշակցեցին նրան գահին տիրանալու. իսկ իր թագավորության ամբողջ ընթացքում նա կարողացավ շնորհել ազնվականներին 800.000 գյուղացի:

Պավել կայսրը թագավորեց ընդամենը մի քանի տարի, բայց այդ կարճ ժամանակում անգամ կարողացավ շնորհել ազնվականությանը 530 հազար գյուղացի: Գյուղացիներին մասնավոր անձանց նվիրելը վերացավ միայն Ալեքսանդր I-ի թագավորության ժամանակ:

Ճորտերի բաժնուհատիչ Ճորտերը հավասար չափով չեցին բաշխումը բոլոր սեզի: ված չերկրի զանազան վայրերում: Նրանք ավելի խիտ, ավելի շատ ելին կենտրոնական սահանգներ

րում. Կալուզայի, Սմալենսկի և Տուլայի ճորտերը կազմում
էին ամբողջ գյուղացիութեան ավելի քան 80⁰/₀-ը: Կեն-
տրոնից վորքան հեռանում ենք դեպի ծայրերկրներն,
այնքան նվազում է ճորտերի քանակը: Ուֆայի նահան-
գում, որինակ, ճորտերը կազմում էին ընդհանուր գյուղա-
ցիութեան 21⁰/₀-ը, Վլատկայի նահանգում՝ 2⁰/₀: Իսկ այն-
պիսի հեռավոր անկյուններում, ինչպես Արխանգելսկի նա-
հանգն է և Սիբիրը, համարյա ճորտեր ամենևին գոյու-
թյուն չունեին: Կալվածատերերի ավելի քան յերեք քա-
ռորդը մանր կալվածատերեր էին (յուրաքանչյուրը մինչև
60 հոգի ճորտ ուներ): Նշանակում է կալվածատերերի
մի քառորդը միայն խոշոր կալվածքներ ուներ. բայց հենց
այդ մի քառորդին էր պատկանում բոլոր գյուղացիների
80⁰/₀-ը: Այդ խոշոր կալվածատերերի շարքում կային այն-
պիսիները, վոր ունեին տասնյակ-հազարավոր գյուղա-
ցիներ. որինակ՝ Պ. Վ. Շերեմեայևն ուներ մոտ 60.000
հոգի, Պատյոմկինը՝ մոտ 55.000, Ռազումովսկին՝ ավելի
քան 45.000:

Քահրա յեվ բե- Նայած հողի հատկութեան, կալվածքի
գառ կամ կոռ: մեծութեան և մայրաքաղաքներից ունեցած
հեռավորութեան՝ տնտեսութեան յերկու ձև էր կիրառվում.—
բահրային, յերբ գյուղացիները հողից ոգտվելու համար
վորոշ գումար էին տալիս կալվածատիրոջ ոգտին, և բե-
պառային, յերբ գյուղացիները վորոշ քանակութեամբ հող
էին մշակում կալվածատիրոջ ոգտին: Բահրային տնտեսու-
թյունը գերակշռում էր վոչ-սևահող վայրերում. այդտեղ
գյուղացիների կեսից ավելին (55⁰/₀) կապված էր բահրային:
Նվազ պտղաբեր հողը չէր կարող հարուստ բերք տալ, և
գյուղական տնտեսութեան հիմքն այստեղ կազմում էին
զանազան կողմնակի աշխատանքները, — արհեստներն ու
գրադմունքները: Ուստի կալվածատիրոջ շահը պահանջում
էր չկապել գյուղացիներին հողի մշակութեան հետ, այլ
հարկ դնել նրանց արհեստագործական վաստակի վրա:

Սևահող շրջանում, ընդհակառակը, հողագործութունն
եր վաստակի գլխավոր աղբյուրը. ուստի այստեղ կալվա-
ծատիրոջ համար շահավետ եր ստիպել գյուղացիներին,
վոր հող մշակեն իր համար: Այդ պատճառով ել սևահող
նահանգներում բեգառային կամ կոռային տնտեսութունը
գերակշռում եր բահրային տնտեսությանը. գյուղացիների
չերեք քառորդը կոռվոր եր, կապված բեգառին, և մի քա-
ռորդը միայն կապված բահրային: Սակայն բացի հողի հատ-
կութունից կային ուրիշ պայմաններ ևս, վորոնցով պայ-
մանավորվում եր տնտեսության այս կամ այն ձևի կիրա-
ռումը: Բեգառն, որինակ, գերակշռում էր մանր կալվածք-
ներում և այն կալվածքներում, ուր ապրում ելին կալվա-
ծատերերը: Այսպես, որինակ, Մոսկվայի նահանգում, չնա-
չած սևահող շրջանում չի գտնվում, գյուղացիների միայն
36 տոկոսն եր բահրային կապված, մնացածները բեգառ
ելին կատարում, կոռվոր ելին:

Գյուղացիների համար անպայման ավելի շահավետ եր
բահրային սխտեմը: Բահրային կալվածքներում գյուղացի-
ների տնորինությանն եր հանձնվում սովորաբար կալվա-
ծատիրոջ ամբողջ հողը, այնպես վոր չերբեմն հոգուն
ընկնում եր քսան դեսիատին հող: Իհարկե, այդ ամբողջ
հողը չեր վարվում, բայց միջին թվով չուրաքանչյուրին
2—3 դեսիատին վարելահող եր հասնում: Վարելահողից
բացի գյուղացիներն ոգտվում ելին նաև արոտներով ու
անտառներով և առանձին անտառապատ վայրերում զբաղ-
վում ելին փայտագործական արհեստներով. մերձվոլգյան
վայրերում, որինակ, փայտ ելին կոտորում և գետով տա-
նում վաճառելու, նավ ելին շինում և այլն:

Քանի վոր բահրայի տրվում ելին սովորաբար այն
կալվածքները, ուր կալվածատերեր չելին ապրում, ուստի
գյուղացին այստեղ բավականաչափ ազատ եր տիրոջ կա-
մայական միջամտութունից իր տնտեսական գործերում,
և այդ հանգամանքը վորոշ չափով զարկ եր տալիս նրա

չեռանդին ու նախաձեռնութեանը: Խոշոր բահրային կալ-
վածքներում գյուղացիների մեջ պատահում ելին շատ ու-
նեւոր մարդիկ. որինակ՝ Շերեմետյեի և իշխան Գալիցինի
կալվածքներում գյուղացիներից վոմանք ունեցին կաշվի,
ոճառի և մանվածքի գործարաններ: Պատահում ելին ճորտ
գյուղացիներ, վորոնք մինչև 200.000 ռուբլու գուլք ու-
նեցին:

Գուլքային այդպիսի տարբերութեան հետեանքով տար-
բեր եր նաև գյուղացիների վրա դրած բահրան: Յեկա-
տերինայի թագավորութեան սկզբում ամենասովորական
բահրան կազմում եր հոգուն 2 - 3 ռուբլի: Սակայն 1783
թ. կառավարութեունն ինքն արդեն խոստովանում ե, վոր
«կալվածատիրական բահրան կամ չեկամուտն ամենուրեք
հասնում ե հոգուն 4 ռուբլու, իսկ մեծ մասամբ ավելի
շատ»: XVIII դարի վերջին բահրան հասավ հոգուն 5—10
ռուբլու: Ինքնին հասկանալի չե, վոր ունեւոր գյուղացինե-
րի համար կալվածատերն առանձին բահրա չեր նշանակում,
չերբեմն հոգուն 200—300 ռուբլի: Սովորական բահրան,
չեթե ի նկատի առնենք հողի այն քանակութեունը, վոր
ոգտագործում եր գյուղացին բահրային կալվածքներում,
համապատասխանում եր հողի սովորական կասլավարձին:
Նույնը չենք նկատում, սակայն, բեգառային կալվածքներում:
Գյուղացուն ընկած հողի քանակն այդ կալվածքներում սո-
վորաբար ավելի քիչ եր, և այդ հողից ոգտվելու համար
գյուղացին ստիպված եր մշակել կալվածատիրոջ ոգտին
(այսինքն վարել, ցանել, հնձել, կալսել, կրել և այլն) նրա
հողամասը, վորն իր մեծութեամբ կազմում եր գյուղա-
ցիական հողամասի կեսը. այնպես վոր չեթե գյուղացին
իր համար մշակում եր, որինակ, չերեք դեսիատին, ապա
կալվածատիրոջ ոգտին պետք ե մշակել 1½ դեսիատին:

Բեգառը սովորաբար շաբաթական չերեք որ եր, բայց
ամառվա չեռուն աշխատանքի շրջանում կալվածատերը
պահանջում եր նախ իր գործը վերջացնել և ապա գյու-

դացիական աշխատանքին անցնել կամ գյուղացիական աշխատանքը գցում եր վատ չեղանակներին: Աշխատանքից բացի բեգառային կամ կոռվոր գյուղացիներից պահանջվում եր նաև բնական տուրք— գանազան մթերքներ, ինչպես հացի և բանջարեղենի $\frac{1}{5}$ -ը, հետո վորոշ քանակությամբ ձու, ընտանի թռչուններ, չուղ, միս, մեղր, քաթան և մահուդ ամեն մի ընտանիքից:

Չմեռվա չերեկոները գեղջկուհիներն զբաղվում եյին քաթան և մահուդ գործելով: Տղամարդիկ ձմեռը սովորաբար բեռներ եյին փոխադրում աղայի համար— սալներով կրում եյին նրա բերքը, ուր վոր հրամայեր կալվածատերը:

Յեթե կոռվոր գյուղացիների բոլոր աշխատանքները և կալվածատիրոջ ոգտին տված բնական տուրքերը— մթերքները փողի վերածենք, դուրս կգա, վոր կոռվոր գյուղացիները մոտավորապես չերկու անգամ ավելի պիտի վճարեյին, քան բահրային գյուղացիները: Վաթսուհական թվականներին բահրային գյուղացիները վճարում եյին հոգուն մոտ 2 ուրբլի, իսկ կոռվոր գյուղացիները՝ 7—8 ուրբլի: Իննսուհական թվականներին բահրային գյուղացիները վճարում եյին մոտ 7 ուրբլի, իսկ կոռվորները՝ 14—16 ուրբլի: Բացի այս բոլորից կոռվոր գյուղացիների դրությունն ավելի վատ եր նաև նրանով, վոր նրանք համարյա միշտ ել աղայի աչքի առջև եյին, վորը իր իշխանական ձեռքը կարող եր դնել գյուղացիական ամեն մի բարիքի վրա: Գյուղացիական բարիքներն ամենևին ապահովված չեյին որենքով կալվածատիրոջ կամայականությունից. թե հողը և թե ճորտերը նրա լիակատար սեփականությունն եյին համարվում:

Քանի վոր որենքը չեր սահմանափակում կալվածատերերի իրավունքը նաև գյուղացիության պարհակությունները սահմանելու վերաբերմամբ, ուստի այդ պարհակությունների սովորական չափը, վոր հիշատակեցինք

վերևում, հաճախ խանգարվում էր: Բահրային կալվածներում բացի բահրայից կալվածատերը միշտ էլ բնական տուրք էր պահանջում բերքով. և այդ տուրքերն իրենց քանակով հաճախ հավասարվում էին դրամական բահրային: Բացի դրանից գյուղացիներին բանեցնում էին կալվածատիրոջ շենքերի վրա և խլում նրանց ժամանակը տիրոջ բեռները տեղափոխելու, նրա զվարճության համար լճակներ փորելու համար, և այլն: Բահրայի շափը չերբեմն բարձրանում էր հսկայական թռիչքներով:

Բեգառային աշխատանքներն էլ, ժամանակակցի վկայությամբ, «հաճախ մարդկային ուժից անցնում էին».

չերեք որվա փոխարեն կալվածատերն ստիպում էր գյուղացիներին աշխատել շաբաթվա բոլոր, նույնիսկ տոն որերը:

**Գյուղացիների
սահագործման
սեսակները:** Տնտեսության թե բահրային և թե բեգառային սխտեմները հիմնված էին ճորտային աշխատանքի պարզ շահագործման վրա: Կալվածատերն, իբրև գյուղի տեր, վոչինչ չէր անում հողի մշակման գործում վորևե բարելավում մրտցրնելու և այդպիսով ճորտային աշխատանքի արդյունավետութունը բարձրացնելու համար: Յեվ ինչո՞ւ պետք է կալվածատերը ծանրաբեռներ իրեն մշակման բարելավման հոգսերով, չերբ նախորոք գիտեր արդեն, վոր ճորտային պատրաստի աշխատանքը կապահովի նրան այն ամենով, ինչ վոր հարկավոր է նրա ապրուստի համար: Այս տեսակետից նրան հարկավոր էր հոգալ միայն ճորտերին լավ կառավարելու մասին, վորպեսզի նրանք ճշտությամբ հատուցեին այն բոլոր տուրքերը, վոր դրված էր նրանց վրա:

Վարչութունը սովորաբար կենտրոնանում էր կենտրոնական հիմնարկում — «տնային գրասենյակում». այստեղից հրամաններ և հրահանգներ էին ուղարկում կալվածք, վոր և կատարում էին այնտեղ կալվածային իշխանությունները՝ կառավարիչները, գործակալները, տանուտեր-

ները, բուրմիստրները (կալվածքի կառավարիչ գյուղացի-
ներին)։ Կառավարիչների համար շարադրվում ելին ման-
րամասն հրահանգներ. նրանց գլխավոր պարտականութունն
եր անթերի կերպով հավաքել գյուղացիներից պետական
և կալվածատիրական տուրքերը և հետևել նրանց բարո-
յականության, վորպեսսի գյուղացիները «կանոնավոր կյանք
վարեն, պարապ-սարապ չթափառեն և չհարբեն»։ Կալվա-
ծային իշխանութունների պահպանման ծախքը հաճախ շատ
ծանր և ավելորդ բեռ էր դառնում գյուղացիների համար.
Իսկ չեթե կալվածատերը հեռու չեր գտնվում, գյուղացի-
ներն ստիպված ելին լինում տանել այդ իշխանութուն-
ների կամայականութունները։ Զիշտ է, կալվածատերը
խրատում է կառավարչին, թե «մեղք է ավելորդ աշխա-
տանքով ծանրաբեռնելը, և դա չերբեք իմ կամքով չի
չեղել», բայց այդպիսի խրատները, իհարկե, չելին ոգևում։
Իշխան Ռուսլանցեր նույնիսկ ավելի խորամանկ միջոց-
ների չեր դիմում — գյուղացիները պետք է ամեն ամիս ստո-
րագրութուն տային գործակալին, թե «իրենց վերաբերմամբ
ավելորդ հարստահարութուն և ծանրաբեռնութուն չի
չեղել»։

Կալվածքի կառավարութունը տեղի չեր ունենում
գյուղական հասարակության չեռանդուն մասնակցությամբ։
Այդ հասարակութունը բոլորի փոխադարձ չերաշխավորու-
թյամբ (круговая порука) ապահովում էր պարհակութունների
անթերի կատարումը. և այդ դեպքում ավելի ունևորները
պետք է ոգնեյին չքավորներին։ Ինքնըստինքյան հաս-
կանալի չե, վոր բահրային կալվածքներում հասարակութունն
ավելի մեծ ինքնուրույնութուն էր վայելում, քան բեզա-
ռային կալվածքներում. այստեղ նա սովորաբար իր հան-
ցավոր անդամներին դատելու իրավունք էր ստանում։
Սակայն ազնվականները պարտադիր ծառայութունից
ազատվելուց հետո հետզհետե ավելի մեծ սիրով ելին
խառնվում գյուղացիական կյանքին և իրենց հրամաններով

ավելի վորոշ սահմանում գյուղացիութեան ամեն մի քայլը: Այդպիսով նրանք սահմանափակում ելին գյուղական հասարակութեան ինքնուրույնութունը:

Տերունի հրամաններով եր սահմանվում աշխատանքների կարգը, գյուղացիական գույքի կազմը, գյուղացիների կացարանի շինութեան տիպարն ու ձևը, կերակուր պատրաստելու չեղանակը, կրակն ու ճրագը հանգցնելու ժամանակը և այլն:

Առանձնապես ծանր եր կալվածատիրոջ այդ միջամտութունը ճորտերի ընտանեկան գործերին: Կալվածատերը գյուղացիների ամուսնութեանը նայում եր վորպես իր հարկատուների թիվն ավելացնող մի միջոցի և պարզ կերպով գյուղացուն հավասարեցնում անասունի: «Բարի տնտեսներն անասուններից և թռչուններից ձգտում են սերունդ առաջացնել. իսկ մարդը, վոր կրթութունն ել ունի, ավելի ևս պիտի հոգա մարդկային ցեղի բազմացնելու մասին», — ասում ե տերունի հրահանգներից մեկը:

Իշխան Արլովի հրահանգում մի այսպիսի կետ կա. «Յերբ աղջիկների բսան տարին լրանա, տան մեծը նրանց պետք ե մարդու տա. ամուսին գտնելու համար տրվում ե կես տարի ժամանակամիջոց: Յեթե այդ վորոշյալ ժամանակամիջոցում աղջիկները մարդու չտրվեն, այդպիսիներից պետք ե տուգանք վերցնել միջակ տնից տարեկան 25 ռուբլի, հարուստ տնից — 50 ռուբլի, իսկ չքավորներին, վորոնք վճարելու հնարավորութուն չունեն, պետք ե պատժել»:

Չնայած, սակայն, այդպիսի միջոցների, կալվածատիրոջը հաճախ չեր բավարարում կալվածքի սովորական չեկամուտը: Քաղաքներում և հատկապես մայրաքաղաքներում սկսում ե ուժեղանալ շռայլութունը: Կալվածատերերն ազահաբար վրա չեն ընկնում դրսից բերած ամեն տեսակի նորութուններին — կահկարասիքի, հագուս-

տի, ուտելիքների: Զարգանում են ուժեղ կերպով զանա-
զան տոնակատարութիւնները, սկսում է ծաղկել «աշ-
խարհիկ ապրուստը» — իսկ այդ բոլորը պահանջում են
դրամական միջոցների ուժեղ հոսանք: Կալվածատերը մեծ
չեռանդով ուժեղացնում է ճորտերի աշխատանքը», բայց
այդ միշտ էլ ցանկալի հետևանքներ չի տալիս. և անա-
ազնավականները XVIII դարում սկսում են վաճառել ճոր-
տերին հատ-հատ առանց հողի: Բազմաթիվ առևտրական
մեծ քաղաքներում կազմակերպվում են ճորտերի վաճառման
խսկական տոնավաճառներ (չարմարկա): Պետերբուրգ են
տանում ճորտերին ամբողջ նավերով. մայրաքաղաքների
թերթերում լույս են տեսնում այսպիսի հայտարարու-
թիւններ. «Վաճառվում են մի հասակավոր աղջիկ և բա-
նեցրած կառքեր». «Վաճառվում են մի 30 տարեկան աղջիկ
և մի ջահել դարչնագույն ձի». «Վաճառվում են չերկու-
աղջիկ և միքանի սաժեն խոշոր քար, վոր պետք կգա
հիմքի համար»:

Մարդկային այդ հատավաճառը մեծ շահ էր բերում
կալվածատերերին: Գները մատչելի էին. գեղեցիկ աղջիկը
ծախում էին 25 ուրբով. բայց աղբյուրների մեջ հիշված
են դեպքեր, չերբ, ինչպես, որինակ, 1781 թվին, չերկու աղ-
ջիկը վաճառել են 5 ուրբով. Ավելի բարձր էր շափահաս
գործավորի գինը — 100—120 ու., իսկ դրանից էլ ավելի
բարձր՝ գինվորացուի գինը — մինչև 400 ուրբի: Ավելի
թանգ էին գնահատվում մի բան սովորած, այսպես կոչ-
ված ուսյալ մարդիկ. որինակ՝ ճորտ չերաժշտին կարելի
չէր գնել 800 ուրբով: Սակայն ազնավականներն այդ ժա-
մանակները մարդկանցից ավելի թանգ էին գնահատում
ցեղական շներին: «Շնպահ կալվածատերերն, — ասում է
ժամանակակիցներից մեկը, — հարչուրավոր մարդիկ էին
տալիս մի շան փոխարեն: Դեպքեր են չեղել, վոր մի բա-
րակի (վորսի շուն) փոխարեն մի ամբողջ դյուղ գյուղա-
ցիներ են տվել»: Այն ժամանակ, չերբ գինվորացուի

ամենաբարձր գինը 400 ո. չեր, կան վկայութիւններ, վոր բարակի ձագին վճարում էին 3000 ուրբի:

Նման վերաբերմունքը գեպի գյուղացին և վերջինիս համեմատական եժանութիւնը պարզում են, թե ինչու էին կալվածատերերն ահագին քանակութեամբ սպասավորներ հավաքում իրենց գյուղացիներից: Իշխան Գալիցինի սպասավորների թիվը կազմում էր իր ամբողջ գյուղացիների 10 տոկոսը: Հազվադեպ չե, չերբ սպասավորների կազմը բաղկացած էր լինում 300 - 500 հոգուց: Այդ սպասավորների շարքում հանդիպում ենք ամեն տեսակ արհեստի կամ պրոֆեսսիայի մարդկանց—դերձակների, մաշակարների, ձիասարք շինողների, ախոռապանների, անասնաբուժների, այգեպանների, բուժականների, դեղագործների, ժամագործների, հյուանների, ատաղձագործների, քարտաշների, աղյուս պատրաստողների, ուսուցիչների, գրասենեկային ծառայողների, արտիստների, նկարիչների, ճարտարապետների, աստղագետների չերաժիշտների, նուշնիսկ ճորտ աստվածաբանների, վորոնք պետք է իրենց տիրոջ հետ զրուցեցին աստվածային թեմաների մասին— թե բոլոր մարդիկ չեղբայրներ են:

Տերերի բնահանուցները: Տերերի քմահաճուցքով ճորտերին չերբեմն նուշնիսկ արտասահման էին ուղարկում ուսանելու: Այդպիսի աշակերտների թիվում չերբեմն պատահում էին իսկական տաղանդներ, բայց նրանք էլ չենթակա էին իրենց տիրոջ քմահաճուցքին:

Կալվածատերն իր սպասավորների թիվը կարող էր ավելացնել վորքան ցանկանար, քանի վոր բոլոր սպասավորների տուրքերը գյուղացիներն էին տալու, և հենց սպասավորների պահպանութեան ծախքն էլ գյուղացիներն էին հոգալու: Բազմաթիվ սպասավորներ ունեցող կալվածատերը մանրամասն գրավոր հրահանգ էր կազմում նրանց համար, թե ով ինչ պետք է անի և ինչպես: Ստեղծվում է մի խիստ հաշվառք, ահագին քանակութեամբ թուղթ է

գործադրվում զանազան հրամաններ, կարգադրություններ, տեղեկագրեր և այլն գրելու համար: Հրահանգները վորոշում են տան ամբողջ կարգ ու կանոնը՝ սկսած սենյակներ մաքրելուց մինչև կրոնական ծիսակատարությունները:

Կալվածատերերից մեկի— Գալավինի սպասավորները ամեն բան անելիս պետք է Հիսուսի աղոթքն (յերևի «Հայր մերը» — Հ. Հ.) ասելին: Յերբ նա քնելու գնար, տան ներսի սպասավորները պետք է այդ աղոթքն ասելին, իսկ դրսի սպասավորները պատասխանելին նրանց «ամեն» բառով. և այդ ասելով սկսում էին ծածկել կրկնափեղկերը: Բայց նախ քան այդ աղոթքը պետք է աղայի սիրած յոթ կատուներին կապելին սեղանից. և չեթե այդ կատուներից վորևե մեկը կտրեր իր կապը և գնար աղային անհանգստացնելու, ասկա պատժի էլին չենթարկվելու թե կատուն և թե նրան հսկող աղախինը: Յերաժշտասեր աղաներն էլ պահանջում էին, վոր սպասավորներն իրենց հետ խոսեն ոպերային ձևով. կարելի չե չերևակայել, թե ինչպիսի մուղիկա չեր ստացվում, չերբ աղան հրամայում եր վորևե մեկին ախոռ գնալ ճիպոտի հարվածներ ուտելու:

Գրաֆ Շերեմետևի կալվածքում (Կուսկովոյում) տարեկան մոտ 40 ոպերա չեր տրվում. հանդիսատեսների թվումն էլին լինում— ինքը Յեկատերինան, լեհական թագավոր Ստանիսլավ Պոնյատովսկին և շատ իշխանազուներ: Ամեն անգամ ներկայացումն ավարտելուց հետո բոլոր ճորտ արտիստներն էլ աղայի հրամանով իբրև լաքեյ պետք է պատվելին հյուրերին:

ձորերից պատ- Թեև ուսական կալվածատերն իր ճորտերին մահվան պատիժ տալու իրավունքով չեր ոգավում, բայց և այնպես նրա իշխանությունն էլ՝ դատելու և պատժելու վերաբերմամբ՝ շափազանց մեծ եր: Դեռ 1765 թ. (Յելիզավետայի որոք) կալվածատերերն իրավունք ստացան Սիբիր աքսորելու իրենց ճորտերին:

իրբև պատիժ: Այստեղ պետութչունը հետապնդում է այդ
չերկիրը գաղթականներով բնակեցնելու խնդրին, բայց
Յեկատերինան այդ իրավունքն ավելի ընդլայնեց և զրկեց
նրան պետական բնույթից. այսպես 1765 թ. նա թույլ
տվեց, վոր կալվածատերերն «իրենց այն գյուղացիներին,
վորոնք շնորհիվ խիստ հանդգնութչյան պատժի չեն արժա-
նի», տաժանակիր աշխատանքի ուղարկեն և նույնիսկ չեա-
բերեն այնտեղից ըստ իրենց հայեցողութչյան: Վերջին
պայմանն ինքնին խանգարում է արդեն Սիբիրը բնակե-
ցնելու պետական քաղաքականութչունը: Սիբիր աքսորի
կամ տաժանակիր աշխատանքի ուղարկված բոլոր գյուղա-
ցիների փոխարեն կալվածատերը վարձատրութչուն էր
ստանում պետական գանձարանից, քանի վոր բոլորին,
աքսորվածներին ել, հաշվում էին զինվորացու:

Պետութչունը պահանջում էր միայն, վոր աքսորվող-
ները 45 տարեկանից մեծ չլինեյին, և վոր նրանց չզատե-
լին իրենց կանանցից: Յերեխաներից գատել կարելի չեր
համաձայն որենքի. բայց չեթե կալվածատերը աքսորակա-
նի հետ թույլ էր տալիս նաև նրա չերեխաներին, ապա
նրանց փոխարեն վորոշ վճար էր ստանում գանձարանից—
մինչև 5 տարեկան տղաների համար ստանում էր 10 ռ.,
իսկ 5 — 15 տարեկանների համար՝ 20 ռ., աղջիկների հա-
մար դրա կեսն էր ստանում, այսինքն չերկու անգամ քիչ:

Այս իրավունքը, սակայն, կալվածատերերը խոշոր չա-
փով սկսեցին իշարը գործադրել: Նրանք Սիբիր էլին քշում
այն գյուղացիներին, վորոնք ծերութչյան կամ խեղանդա-
մութչյան պատճառով այլևս չեյին կարողանում աշխատել:
Թե վորքան մեծ էր այդպիսի աքսորականների թիվը, չե-
րևում է նրանից, վոր միայն հենց 1771 թ. կալվածատե-
րերը պետութչյանը հանձնեցին 7823 հոգի, վորոնցից Սի-
բիր հասավ միայն քառորդը, իսկ մնացածը մեռան տեղ
չհասած, ճանապարհի դժվարութչյան պատճառով: Սիբիր
հասածներն ել չկարողացան հողագործական աշխատանք-

ներով զբաղվել. Սիրիլի նահանգապետը նրանց մասին տեղեկացրեց, վոր նրանք «ծեր են, ուժասպառ, զանազան հիվանդութիւններով բռնված, այնպես վոր շարժվել ել չեն կարողանում»։ Յեթե կալվածատերերը կարողացան այդ տեսակետից այդպես իշարը գործադրել իրենց տված իրավունքը, ապա մյուս պատիժների խնդրում նրանք ել ավելի հնարավորութիւններ ստացան, քանի վոր որեւէն այդ տեսակետից կալվածատիրոջ իշխանութիւնը վոչ մի սահման չեր դնում։

Կալվածատերերը սիրում ելին իրենց ճորտերի համար պատիժների ամբողջ կանոններ կազմել։ Այդ կանոնների հիման վրա մենք ծանոթանում ենք ամեն տեսակ պատիժների անվերջ սիստեմի հետ. — տուգանք, ստացվածքից զրկել, հարբածների վրա ջուր ածել, ճիպոտի և մտրակի հարվածներ տալ, բանտարկել, շղթայել, վոտները զընդանում դնել, վզին չերկաթե ողակ անցկացնել և այլն։ Պատժում ելին ամեն տեսակ հանցանքի համար — գողութիւն, գործը վատ կատարելու, աղամանը շրջելու (ասում ելին, վոր աղամանի շրջվելը դժբախտութիւնն նշան է), ծուլութիւն, բեգառը շտալու, թերահավատութիւն, մի խոսքով՝ ամեն բանի համար։ Ռուս ազնվականը գերմանական հագուստի տակ պահել եր նախապատմական բարբարոսութիւն բոլոր գծերը. և այժմ լիակատար տեր դառնալով գյուղում, ծառայութիւնից ել ազատ լինելով և այլասերված՝ մարդու վրա ունեցած իշխանութիւնը՝ խայտառակութիւն ամեն տեսակի նուրբ ձևեր եր հնարում ճորտերի վերաբերմամբ։

Կալվածքներին ուղղած հրամանների մեջ, վորոնք հասել են մեր ձեռքը, շտեմնված պատիժների չենք հանդիպում։

Այսպես, որինակ, մի հրամանի մեջ կարդում ենք հետևյալը. «Բոլորին ստիպել, վոր ապաշխարեն (խոստովանվեն) և հաղորդվեն առանց բացառութիւն։ Իսկ ովքեր մի տարի չեն ապաշխարի և հաղորդվի, ապա շապաշխարող-

ներին հարվածել մտրակներով, իսկ շհաղորդվողներին ճի-
պոտների 5000 հարված տալ անխնա կերպով»։ Այսպես
եր կրոնական դաստիարակութուն տալիս իր գյուղացի-
ներին բարեպաշտ կալվածատերը։ Իսկ վորպեսզի նման
խիստ պատիժ կրողն, այնուամենայնիվ, աշխատանքից չխու-
սափի, կալվածատերը դրա համար ել միջոցներ եր ձեռք
առնում. «Այսուհետև չեթե մեր մարդկանցից (գյուղացի-
ներից) վորևե մեկը մտրակի հարվածների չենթարկվի, տալ
նրան 100 հարված, իսկ ճիպոտի 17.000 հարված. այդ-
պիսիներին թույլ չտալ մի շաբաթից ավել պառկել. իսկ
ուժ մտրակի 150 հարված տրվի և ճիպոտի 1000 հար-
ված, այդպիսիներին ել թույլ չտալ $1\frac{1}{2}$ շաբաթից ավել
պառկել։ Իսկ ով հիշյալ ժամանակից ավել պառկի, այդ
ավելորդ որերը զրկել նրան հացից և նրա հասանելիքից,
իսկ ոռձկից ել հանել այդ ավելորդ որերի գումարը»։ Ի-
րենց ազահությամբ ավելի աչքի ելին ընկնում ազնվական
կանայք։ Տգետ, պարասպ և այլասերված այդ կալվածատի-
րուհիները տանջելու ինչ-վոր մի առանձին հիվանդագին
ձգտումն ելին ցուցադրում։ Այդպիսի պայմաններում կալ-
վածատիրոջ իշխանության սահմանափակումը, մահվան
պատժի իրավունք չտալով նրան, ելական նշանակութուն
չուներ. և իրավացի չեր այն ոտարերկրացին, վոր ծանո-
թանալով ուսական ճորտատիրական կարգերին՝ նկատում
եր. «Իրոք կալվածատերերը հնարավորութուն են ստա-
նում մահվան պատիժ տալ գյուղացիներին»։

Յեվ իսկապես մենք մի շաբաթ դեպքեր գիտենք, չերբ
պատիժը մահով եր վերջանում։ Բավական ե հիշել, վոր
հռչակավոր Սալտիշիխան մեղադրվում եր 75 սպանության
մեջ։ Դժվար եր արդարութուն գտնել դատարաններում
կալվածատիրոջ նկատմամբ, քանի վոր բոլոր դատավոր-
ներն ել կալվածատեր ելին։ «Դուք ինձ վոչինչ չեք կա-
րող անել, — գոռում եր Սալտիշիխան բողոքավորներին, —
դատավորներն ինձ, այնուամենայնիվ, վոչինչ չեն անի և

ինձ ձեզ հետ չեն փոխի»։ Իսկ չեթե չերբեմն պատիժն սպանության հասցնելու դեպքը դատարան եր հասնում, և կալվածատիրոջ հանցանքն այդ գործում ակնհայտնի փաստ եր լինում, դատարանը նրա համար հանցանքի նրբացուցիչ հանգամանքներ եր գտնում։ Որինակ՝ Մասլովա կալվածատիրուհուն, վորն իր ճորտ աղախնին ծեծել եր մինչև մահվան հասցնելը, դատարանը դատապարտեց միայն չեկեղեցական ապաշխարության, վորովհետև դատարանում «չհաստատվեց, թե նա մտադրություն ե ունեցել հիշյալ կնոջը ծեծել մինչև մահվան հասցնելը»։ սակայն մտրակի հարվածներ կերան նրանք, ովքեր կալվածատիրուհու հրամանով ծեծել էին հիշյալ կնոջը։ Մի ուրիշ կալվածատիրոջ դատարանը ներումն ե շնորհում այն պատճառով, վոր հանցանքը կատարել ե «մելամաղձոս ինքնամոռացության մեջ»։

Յեկատերինան գիտեր, վոր ազնվականությունն այդպես իշարն ե գործադրում իրեն տված իրավունքները, բայց վոչինչ չարեց դրա դեմն առնելու համար. ընդհակառակը, 1767 թ. հրաման տրվեց, վոր ճորտերը չհամարձակվեն բողոքել իրենց կալվածատերերի վրա։ Կառավարությունը վախենում եր ձեռք տալ կալվածատիրոջը, վորը շատ լավ եր գիտակցում իր ուժը պետության մեջ։ Այդ տեսակետից մի շատ բնորոշ փաստ կարելի չե մատնանշել – Վարոնեժի կալվածատեր Դեվիլները Յեկատերինայի թագավորության վերջում չերկու թնդանոթի հարվածներով հանդիպեց իր մոտ քննության գնացող վիճակալին դատարանի կազմին։

Ըստ վ. ԲՍԳՍԱՆՅՈՒԲՈՎԻ

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ի՞նչպես առաջ յեկավ ճորտատիրությունը Ռուսաստանում:
2. Ի՞նչ կապ ունի ճորտատիրությունն ավատական կարգերի հետ:
3. Ի՞նչ դեր էյին կատարում պետական կառավարությունը, վանքերն ու կղերն ավատական կարգերում:
4. Ի՞նչ հարաբերություն ունեյին ճորտատեր ազնվականներն ու ճորտ գյուղացիները—ազնվականների իրավունքները և ճորտերի պարհակությունները:
5. Ի՞նչ տարբերություն ճորտի և ստրուկի կամ ծառայի միջև:
6. Ռուս հասարակության վճիռ խավերը կամ դասակարգերն էյին ճորտատիրության կողմնակից և վորոնք դեմ—համառոտ տեղեկություն դեկարրիստների մասին:
7. Ի՞նչն է ճորտատիրության վերացման պատճառը:
8. Ի՞նչո՞ւ ճորտատիրության վերացումը Ռուսաստանում չազատագրեց գյուղացիությունը:
9. Ի՞նչ հարաբերություն ստեղծվեց ճորտատերերի և ճորտերի միջև ճորտատիրության վերացումից հետո:
10. Յե՞րբ ազատագրվեց վերջնականապես գյուղացիությունը. ի՞նչ յեղավ կալվածատեր ազնվականությունը Մեծ Հոկտեմբերից հետո:
11. Ճորտատիրությունն յեղե՞լ է նաև ուրիշ յերկրներում. վճիռեղ և ի՞նչ ձևի:
12. Ի՞նչ փոխհարաբերություն ունեյին գյուղացիներն ու ազնվականները Հայաստանում միջին դարերում—նախարարության ժամանակ և Կիլիկիայում—Ռուբինյան շրջանում:
13. Ի՞նչ պարհակություններ էյին կատարում Եջմիածնի վանքի գյուղերը մինչև Հայաստանի խորհրդայնացումը—համառոտ տեղեկություն հայ գյուղի անցյալի մասին. ուսումնասիրել բահրայի, բեգառի չափը, տեսակները և կալվածատիրական իրավունքները պարսկական և ռուսական տիրապետության ժամանակները:
14. Այժմ ել կան ճորտատիրական կարգեր—համառոտ տեղեկություն չին գյուղացիության մասին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Յերես

I. Ճորտատիրական իրավունքի ծագումն.— ըստ Պ. Սլեֆսեյեվի

Ինչ և ճորտատիրական իրավունքը	3
Գյուղացիները մինչև ճորտություն	3
Գյուղացիների հողագրկությունը	5
Պայքար հողի համար	6
Գյուղացիների հողային կազմը	7
Վանքերի մուտքը գյուղերը	7
Գյուղական ցեղերը և գյուղացիները	9
Հողագուրկների ճորտացումը	10
Գյուղացին սկսում և կերակրել կալվածատիրոջը	10
Կապալի պայմանները	11
Կառավարությունը կալվածատիրոջ կողմը բռնեց	12

II. Գյուղացիները XVII դարում.— ըստ Ի. Կասայեվի

Հողին մեխվելն ըստ որենքի	13
Գյուղացիների վաճառման սկիզբը	16
Միջնադարյան կալվածքը մի պետություն և	16
Գործակալներ	18
Կալվածատիրական դատարան	19
Գյուղացիների տեղափոխությունը	20
Գյուղացիական հասարակություն	21
Գյուղացիական պարհակությունների	22
Իրամական բահրա	23
Գյուղացիների փախուստը	24

III. Գյուղացիների դուրբյուներ XVIII դարում.— ըստ Վ. Բազալյուբովի

Բացարձակ միապետություն և ազնվականությունը	26
Իրավունքներն և պարտականությունները	27
Ճորտերի թվի աճումը և դրա պատճառները	28
Ճորտերի բաշխումն ըստ տեղի	28
Բահրա և բեգառ կամ կոռ	29
Գյուղացիների շահագործման տեսակները	33
Ճորտերի վաճառումը և տնային սպասավորներ	35
Տերերի քմահաճույքները	37
Ճորտերին պատժելը	38

